26 ՅՈՒԼԻՍ 2012 ՀԻՆԳՇԱԲԹԻ 135(4987)

# Ազգ

Azg

## Վարչապետն ու օլիգարխները

### *Մենաշնորհների դեմ պայքարը մեկանգամյա գործողություն չէ*

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Օրերս մամուլում տեղեկատվություն էր հրապարակվել, թե Հայաստանի օլիգարխները հավաք են կազմակերպել եւ որոշել այնպես անել, որ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի առաջադրած խնդիրը կառավարությանը՝ ապահովել այս տարի 7 տոկոս տնտեսական աճ, տապալվի: Ինչը, ըստ նշյալ թերթի, անխուսափելի կդարձնի վարչապետ Տիգրան Սարգսյանի հրաժարականը: Դժվար է ասել, որքանով է արժանահավատ այս տեղեկատվությունը, հատկապես եթե նկատի ունենանք, որ այն հրապարակած լրատվամիջոցը երբեք էլ աչքի չի ընկել արժանահավատ տեղեկություններ հրապարակելով: Այդուհանդերձ, անկախ օլիգարխների հավաքի լինել-չլինելուց, ակնհայտ է մի բան, որ մեր օլիգարխները չեն կարող գոհ լինել վարչապետի քաղաքականությունից՝ ուղղված նրանց չարաշահումները թույլ չտալուն:

Մենաշնորհների եւ օլիգոպոլիաների դեմ պայքարը մեկանգամյա գործողություն չէ եւ ոչ մի վարչապետ կամ անգամ նախագահ չի կարող հաշվի չառնել նրանց ազդեցությունը երկրի տնտեսական կամ քաղաքական կյանքում: Սակայն, որ գործող կառավարությունը կոնկրետ քայլեր է անում նրանց ապօրինի գործողությունները թույլ չտալու համար, ակնհայտ է: Անզեն աչքով անգամ նկատելի է, որ վերջին մեկ-երկու տարում առավել շահութաբեր ոլորտներում գերիշխող դիրք ունեցող ընկերությունները արհեստականորեն չեն բարձրացնում իրենց ապրանքների գները (խոսքը շուկայական գներ բնական տատանումների մասին չէ), քանի որ աչքի տակ ունեն դեպքեր, երբ դրա համար պատժվել են իրենց գործընկերները:

Մասնավորապես, երկու խոշոր ընկերություններ՝ «Լուսակերտի թռչնաֆաբրիկան» եւ «Նասալի ֆարմը» գերիշող դիրքի չարաշահման համար տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կողմից տուգանվեցին համապատասխանաբար 100 մլն եւ 50 մլն դրամով:

Տես էջ 2

## Վանո Սիրադեղյանը Interpol-ի «Հետախուզվող անձանց» ցուցակում չկա

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ




Արձակագիր, «Ղարաբաղ» կոմիտեի անդամ, ներքին գործերի նախկին նախարար, Երեւանի նախկին քաղաքապետ ու ԱԺ նախկին պատգամավոր Վանո Սիրադեղյանի անձը, գործունեությունն ու գտնվելու վայրը միշտ էլ եղել են հասարակության եւ լրատվամիջոցների հետաքրքրությունների շրջանակում, սակայն վերջին 10 օրվա ընթացքում առավելապես հանրության ուշադրության կենտրոնում են:

Դրա պատճառ հանդիսացավ այն, որ ասուլիսներից մեկի ժամանակ գրող- վերլուծաբան **Սերգեյ Գալոյանը** հայտարարեց, թե Վանո Սիրադեղյանի գործը գոյություն չունի: Գոյություն ունի Արմեն Տեր-Սահակյանի գործ, որտեղ շոշափվում է նաեւ Վանո Սիրադեղյանի անունը:

«Սակայն Վանո Սիրադեղյանի դեմ գործ չի հարուցվել, նման գործ չէք կարող գտնել, անհնար է», «Ազգ»-ի հետ հեռախոսազրույցում ասաց Սերգեյ Գալոյանը:

Հիշեցնենք, որ 2000թ. խորհրդարանը նիստերին անհարգալից կերպով չմասնակցելու պատճառաբանությամբ Սիրադեղյանին զրկում է պատգամավորի անձեռնմխելիությունից, ապա՝ պատգամավորական մանդատից: Սիրադեղյանը մեղադրվում է մի շարք քաղաքական գործիչների ծրագրված սպանության մեջ: Նրա նկատմամբ հայտարարված է միջազգային հետախուզում:

Համաձայն Արմեն Տեր-Սահակյանի գործով դատավճռի՝ առանձին քաղաքացիների եւ պաշտոնատար անձանց վրա հարձակումներ գործելու, նրանց սպանելու եւ այլ հանցագործությունների կատարման նպատակով 1992թ. ամռանը, ՀՀ ներքին գործերի նախարար Վանո Սիրադեղյանի հանձնարարությամբ, հովանավորությամբ եւ աջակցությամբ, Արմեն Տեր-Սահակյանը կազմակերպել եւ ղեկավարել է կայուն զինված հանցավոր խումբ՝ բանդա, որը գործել է մինչեւ բանդայի անդամների ձերբակալումը՝ 1998թ.: Սիրադեղյանի միջոցով Արմեն Տեր-Սահակյանի խմբին ՀՀՇ վարչության շենքում տրամադրվել է առանձնասենյակ, որը օգտագործվել է որպես բանդայի հավաքատեղի:

Տես էջ 3

## «Ինչու»-ների հեղեղ Սեւանի ջրերի շուրջը

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ

Սեւանա լճից արդեն ընդունված օրենքով թե ՀՀ կառավարության հերթական որոշումով լրացուցիչ ջուր բաց թողնելու խնդիրը բազմաթիվ «ինչու»-ներ հնչեցնելու պատճառ է դարձել: Թեեւ ջրթողի վերաբերյալ պաշտոնական որոշ բացատրություններ կան, սակայն դրանց արժանահավատությունը շատերն են տարօրինակ համարում. հարցը խմորվում է եւ դեռ շատ ջուր է տանելու:

Մեր հրաշք լճից ջուր միշտ է հոսել: Երբ Սեւանի մակարդակը 1916 մետր էր, ջուրը բնականոն ձեւով արտահոսում էր՝ Հրազդան գետի ջրահավաք ավազանի ջրերի հաշվին Արարատյան հարթավայրում կազմելով վայրկյանում մոտ 23 խորանարդ մետր: Թերեւս այդ ժամանակ էլ ծնվեց ջրերն արդյունավետ օգտագործելու գաղափարը, եւ 1930-60-ականներին կառուցվեցին Սեվան-հրազդանյան հիդրոհամալիրի 6 կայանները: 1960-ին, օրինակ, երբ ՀՍՍՀ-ում չկային ոչ գազով ու մազութով, ոչ միջուկային վառելիքով աշխատող էլհզորություններ, այլ միայն հիդրոկայաններ էին, դրանք թողարկեցին 2.750 մլն կվտժամ էլհոսանք: 1965-ից միայն ջրի թողքը Սեւանից կրճատվեց 2,3-3 անգամ, որպիսի տվյալի հանդիպում ենք ՀՍՍՀ հանրագիտարանի Սեւանին նվիրված նյութերում:

Այս քանակի նվազեցմամբ էլ ջրթողը զգալի էր, 1971-80 թթ. այն յուրաքանչյուր տարի ՀՍՍՀ կառավարության որոշումով սահմանվել էր 420 մլն խմ, լճի ջրային հաշվեկշիռը բացասական էր. ջրի մուտքը 28 գետերի հոսքի, տեղումների եւ ստորերկրյա ջրերի շնորհիվ 1,3 մլրդ խմ էր, ելքինը՝ արդեն նշված հոսք Հրազդանով, գոլորշիացում եւ ծծանցում՝ 1.450 մլն խմ: Միայն Արփա-Սեւանի շահագործումից հետո այս մինուս 150 մլն խմ-ը հաղթահարվեց, ջրային պաշարը պետք է որ ավելանար: Բայց տարբեր պարճառներով ու պատճառաբանություններով լճի հարցում դրական տեղաշարժեր չէին արձանագրվում, «ինչու»-ները մշտապես շրջանառվում էին հանրային տրամադրություններում:

Տես էջ 8

## ՌԱԿ Հանրապետական վարչության հայտարարությունը Սիրիայում տիրող իրավիճակի մասին

ՌԱԿ Հանրապետական վարչությունը անհանգստությամբ հետեւում է Սիրիայում ծավալվող իրադարձություններին՝ ամենօրյա կապ պահպանելով Սիրիայի հայ համայնքի եւ տեղի ՌԱԿ շրջանակի անդամների հետ: Համոզված ենք, որ ստեղծված իրավիճակում հայրենի կառավարությունը պատրաստ է իր տրամադրության տակ գտնվող միջոցները կիրառել սիրիահայության իրավունքները պաշտպանելու համար եւ, միաժամանակ, Մայր հայրենիքում ստեղծել բոլոր պայմանները Հայաստան ժամանող սիրիահայերին դիմավորելու եւ պատշաճ ձեւով նրանց տեղավորումն ու կեցությունն ապահովելու համար:

Այս պայմաններում հատկապես վրդովեցուցիչ է ազգային ավիափոխադրողի կարգավիճակ ունեցող «Արմավիայի» պահվածքը, որն այս օրերին ոչ միայն բարձրացրեց Հալեպ-Երեւան թռիչքների գները, այլեւ սիրիահայ ուղեւորներին ստիպում է գնել նաեւ հետդարձի՝ Հալեպ-Երեւան-Հալեպ ավիատոմսեր, ինչն էլ ավելի է թանկացնում Հայաստան փոխադրվելու ծախսերը: Առավել եւս, որ շատերը չգիտեն, թե իրավիճակը Սիրիայում երբ կհանդարտվի, եւ նրանք կկարողանան վերադառնալ Սիրիա:

Միաժամանակ, ՌԱԿ Հանրապետական վարչությունը հայտարարում է, որ Սիրիայի հայ համայնքը, որը հիմնականում ձեւավորվել է Հայոց ցեղասպանությունից հետո, այս տարիներին դարձել է Սիրիա պետության կայացման եւ հզորացման գործոններից մեկը: Եվ Սիրիայի համար ստեղծված այս դժնդակ օրերին հայ համայնքը պետք է հատկապես միասնական լինի՝ դիմակայելու համար ստեղծված իրավիճակին, ինչը հնարավոր է հայկական ավանդական կուսակցությունների եւ ազգային-եկեղեցական կառույցների միասնությամբ եւ համատեղ ջանքերով:

Սիրիայի հայ համայնքի գոյությունը նաեւ ՀՀ ազգային անվտանգության կարեւոր բաղադրիչներից է եւ հատկապես կարեւոր է այդ համայնքի կայունության ու զարգացման երաշխիքների պահպանումը այդ երկրում: Սիրիայի հայ համայնքի անվտանգության համար հարկավոր է երկխոսել Սիրիայում գործող բոլոր առողջ քաղաքական ուժերի հետ, որոնք հասկանում են, որ քաղաքացիական պատերազմը կործանման ճանապարհ է եւ պատրաստակամ են բանակցությունների միջոցով ելք գտնել ստեղծված իրավիճակից դուրս գալու:

Մերձավոր Արեւելքի երբեմնի հզոր պետության՝ Սիրիայի հայաթափումը չի բխում ողջ հայության եւ ՀՀ ազգային շահերից: Միայն Թուրքիան է, որ շահագրգռված է Սիրիայից հայության հեռացմամբ:

ՌԱԿ Հանրապետական վարչությունն իր կողմից հնարավոր բոլոր ջանքերը կներդնի սիրիահայ համայնքի անվտանգությունը պահպանելու համար, միաժամանակ երկխոսություն սկսելով ՀՀ-ում գործող այն կուսակցությունների ու հասարակական կազմակերպությունների հետ, որոնք հասկանում են Սիրիայում ստեղծված իրավիճակի ողջ լրջությունը եւ պատրաստ են բարոյական ու նյութական բոլոր միջոցները ներդնել սիրիահայության իրավունքների պաշտպանության համար:

ՌԱԿ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

## Մի շարք միջազգային հարցերում Հայաստանի ու Ֆրանսիայի դիրքորոշումները համընկնում են

**Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը վերահաստատել է Հայաստանի պատրաստակամությունը շարունակելու ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցությունները: Այս մասին Նալբանդյանը հայտարարել է հուլիսի 24-ին Փարիզում՝ Ֆրանսիայի ԱԳ նախարար Լորան Ֆաբիուսի հետ հանդիպմանը:**

**Ըստ ԱԳՆ-ի հաղորդագրության՝ Նալբանդյանը բարձր է գնահատել Ֆրանսիայի կառուցողական ներգրավվածությունը որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահի: Նալբանդյանը վերահաստատել է Հայաստանի պատրաստակամությունը շարունակելու բանակցությունները, հասնելու հիմնախնդրի խաղաղ կարգավորմանը համանախագահ երկրների ղեկավարների՝ Լ’Աքվիլայում, Մուսկոկայում, Դովիլում եւ Լոս Կաբոսում ընդունված հայտարարությունների եւ ներկայացված առաջարկությունների հիման վրա:**



**Ողջունելով Հայաստանի արտգործնախարարին՝ Ֆրանսիայի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարն ասել է, որ այդ հանդիպումը լավ առիթ է ամփոփելու երկկողմ հարաբերությունների ձեռքբերումները եւ նոր ազդակ հաղորդելու հայ-ֆրանսիական համագործակցությանը:**

Տես էջ 8

# Մանկապարտեզում գումար հավաքելը մնում է անլուծելի հարց

Երեւանի քաղաքապետարանի ենթակայության տակ հիմա գործում է 161 մանկապարտեզ, որտեղ այցելում են մինչեւ 22-23 հազար երեխա, իսկ հերթագրված երեխաների թիվը 7-8 հազար է: Սակայն նախկինում մանկապարտեզների քանակը կրկնակի էր:

Երեւանի քաղաքապետարանի հանրակրթական բաժնի պետի տեղակալ **Սիլվա Աչոյանը** ասում է` մանկապարտեզների քանակը կրճատվեց հատկապես 90-ականներին, իսկ դրանց շենքերն օտարվեցին: Շատ մանկապարտեզների փակման պատճառներից մեկն այն էր, որ շատ երեխաներ այլեւս չէին հաճախում մանկապարտեզ: Բայց այսօր Սիլվա Աչոյանն ուրախությամբ նշում է` երեխաների թիվն այնքան է ավելացել, որ խմբերում նախատեսվածից էլ շատ երեխաների են ընդգրկում: Մի կողմից` սա ուրախացնող փաստ է, բայց մյուս կողմից` անհանգստանալու տեղիք է տալիս, քանի որ մի դաստիարակը ֆիզիկապես ի վիճակի չէ նախատեսվածից ավելի երեխաների հոգ տանելու:

Սիլվա Աչոյանը չնայած ասում է` նման դեպքերում կես դրույքով մեկ ուրիշ դայակի կամ դաստիարակի եւս ընդունում են աշխատանքի, բայցեւ համաձայնում է, որ կգտնվի մանկապարտեզ, որտեղ կես դրույքը դեռ չի ավելացվել:

Մշակված չափորոշչի համաձայն` մեկ խմբում պետք է ընդգրկված լինի 25-30 երեխա, բայց այսօր նրանց թիվը երբեմն հասնում է 40-ի: Եվ ի՞նչ է արվում նման դեպքում, եթե աշխատում է միայն մի դաստիարակ, ինչպես նշեցինք` ամենուր չէ, որ 2-րդ դաստիարակի կես դրույքն ավելացվել է: «Ստիպված մի դաստիարակը կանգնում է երեխաների մեջտեղում ու դաստիարակից վերածվում անվտանգության աշխատակցի», հարցին իր տեսած օրինակը մեջբերելով պատասխանեց երեկ հրավիրված ասուլիսին ներկա լրագրողներից մեկը:



Սակայն քաղաքապետարանը մանկապարտեզների վերաբերյալ ամենաշատ բողոքները ստանում է ներսում փող հավաքելու վերաբերյալ: Ասենք, հրաժեշտի հանդես է կազմակերպվում, եւ ծնողական խորհուրդը դրա համար սկսում է ծնողներից գումար հավաքել, որն էլ նորություն ասած չենք լինի, թե ինչի վրա է ծախսվում` հանդեսի, զգեստների, դաստիարակների կամ տնօրենների համար նվերներ գնելու եւ այլն: Իսկ գումարը մի ծնողը կարողանում է տալ, մյուսը չի կարողանում, բայց դարձյալ տալիս է, մինչեւ քաղաքապետարան հասնում է լուրը, բայց «սովորույթը» չի փոխվում:

Սիլվա Աչոյանը նշում է, որ մանկապարտեզում ներկա է եղել հանդեսի ու ինքն էլ զարմացել երեխաների զգեստների առատությունից: Բնականաբար, այդ հագուստները չեն գնվում ու կարվում մանկապարտեզի բյուջեով: Սիլվա Աչոյանն ընդգծում է` լինում են դեպքեր, որ հավաքված գումարը նույնիսկ չի էլ ծառայում իր նպատակին: Ընդհանրապես, մանկապարտեզում փող հավաքելը, ըստ նրա, նաեւ պետք է արգելի տնօրենը:

Ինչ վերաբերում է սննդին, որը հատկապես ամառվա շոգին կարող է խնդիրների պատճառ դառնալ, Սիլվա Աչոյանն ասում է` արդեն մի ամիս շոգ եղանակ է, սակայն 161 մանկապարտեզում էլ որեւէ տխուր փաստ չեն արձանագրել:

Բայց սննդային խախտումներ, առհասարակ, լինում են: Սիլվա Աչոյանը պատմում է` վերջերս մի այցելության ժամանակ հայտնաբերել են, որ մանկապարտեզում մաքրելիս են եղել ոչ որակյալ կարտոֆիլ:

Կան սննդամթերքի տեսակներ, որոնք մանկապարտեզ մտցնելն արգելված է: Ըստ սննդի արգելված տեսակների մասին փաստաթղթի` մանկապարտեզում երեխաներին չի կարելի տալ որեւէ տեսակի երշիկ, աղացած մսով ուտեստներ, ծկնեղեն, ջրային կենդանիների միս եւ այլն:

Անդրադառնալով սանիտարական պայմաններին` Սիլվա Աչոյանն ասում է, որ մանկապարտեզներում դրանք ապահովված են:

Ներկայումս Երեւանի քաղաքապետարանը մանկապարտեզի յուրաքանչյուր երեխայի համար իր բյուջեից հատկացնում է 18 հազար դրամ:

Ի. Պ.

# Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի տնօրենի պաշտոնում ընտրվեց Նաիրա Այվազյանը

Հուլիսի 25-ին ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Լ. Ա. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի տնօրենի պաշտոնում ընտրվեց Նաիրա Այվազյանը:

Նաիրա Այվազյանը մինչ օրս ֆիզիոլոգիայի ինստիտուտի թունաբանական հետազոտությունների լաբորատորիայի ղեկավարն էր, ինչպես նաեւ ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի եւ ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի գիտության տեղեկատվության վերլուծության եւ մոնիտորինգի կենտրոն-լաբորատորիայի վարիչը:

Նա 62 տպագիր աշխատանքի, այդ թվում` 1 ուսումնամեթոդաբանական գրքի եւ 1 մենագրության հեղինակ է:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական կենտրոն

# Վարչապետն ու օլիգարխները

*Մենաշնորհների դեմ պայքարը մեկանգամյա գործողություն չէ*

*1-ին էջից*

Բուսական սփրեդը կարագի անվան տակ վաճառողները եւս պատժվեցին եւ ինչպես նախորդ դեպքերում, նույնպես չկրկնեցին իրենց կատարած խախտումը: Դա զգուշացում էր մյուսների համար, որոնք զբաղվում են շաքարավազի, հացահատիկի, բուսական եւ կենդանական յուղերի, բրնձի, զանգվածային սպառման այլ ապրանքների, ինչպես նաեւ կահույքի, շինանյութի ներմուծմամբ կամ արտադրությամբ եւ իրացմամբ:

Խոշոր բիզնեսի կողմից հարկային պարտավորություններից խուսափելուն էր ուղղված միջազգային պարտադիր աուդիտի անցկացումը եւ դրա արդյունքների, ինչպես նաեւ հաշվապահական հաշվետվությունների հրապարակումը առավել մեծ շրջանառություն ունեցող առաջին 500 ընկերությունների համար, որի մասին որոշումը կառավարությունն ընդունել էր դեռ երեք տարի առաջ: Մենաշնորհների համար Տիգրան Սարգսյանին եւ կառավարությանը հայհոյախառն քննադատող «լրատվամիջոցներից» շատերը, որոնք շատ հաճախ հովանավորվում են հենց նույն օլիգարխների կողմից, այժմ այդ մասին չեն էլ հիշում: Մինչդեռ, խոշոր բիզնեսի գործունեության թափանցիկությանն ուղղված կառավարության քայլերը եւ մենաշնորհների չարաշահման համար պատիժներն են ստիպելու օլիգարխներին հասկանալ, որ կամայականություններ թույլ տալն այլեւս շատ դժվար կլինի: Իհարկե, հեռու ենք մտքից, թե նրանք արդեն դարձել են պարտաճանաչ եւ օրինապահ: Ավելին, օլիգարխներն ամեն կերպ փորձում են վարկաբեկել Տիգրան Սարգսյանի կառավարությանն ու նրա քայլերը, օգտագործելով իրենց տնտեսական եւ քաղաքական հնարավորությունները, լրատվամիջոցները, խորհրդարանը, իրենց մարդկանց պետական օղակներում եւ այլն: Ընդ որում, կարեւոր էլ չէ, թե նրանք իշխող Հանրապետական կուսակցությո՞ւնն են ներկայացնում, թե՞ նախկին իշխող, այժմ «այլընտրանք» ԲՀԿ-ն: Այնուամենայնիվ, քաղաքական ռիսկ պարունակող օլիգոպոլիաների դեմ պայքարը պետք է շարունակվի, անկախ նրանից, թե դա ում դուր չի գա եւ ով կփորձի օլիգարխների շահերը սպասարկելով վարկաբեկել այն:

ՇԻՐԱԿ

# Ազատամարտիկներն ուզում են լինել դիրքապահ զինվորների եւ սպաների կողքին

Գյումրեցի ազատամարտիկներ Մկրտիչ Բաղդասարյանը (Սամո) եւ Աշոտ Թադեւոսյանը օրերս հանդես են եկել կոչ-առաջարկությամբ` ուղղված Շիրակի մարզի բոլոր կամավոր ազատամարտիկներին, անկախ նրանց կուսակցական պատկանելությունից ու քաղաքական հայացքներից: Կոչի հեղինակները նրանց առաջարկում են միանալ իրենց եւ կամավորականի դիմումով դիմել ազատամարտիկների մարտական ընկերներ ՀՀ գերագույն գլխավոր հրամանատարին ու պաշտպանության նախարարին, որ իրենց զորակոչեն ՀՀ բանակ` սկսած եռամսյա ծառայությունից մինչեւ կադրային ծառայություն:

«Այս մեր կոչով չենք ուզում, որ մեր հայ ժողովրդի մեջ թյուր կարծիք ստեղծվի, թե մեր բանակը ոչ մարտունակ է, որի պատճառով մենք ուզում ենք զորագրվել, հակառակ` մեր տարածաշրջանում ամենամարտունակ եւ ամենաբարվոք վիճակում մեր բանակն է, որը հաղթանակած բանակ է, քանի որ այդ հաղթանակը մենք` կամավորներս, կռել ենք մեր արյան եւ կյանքի գնով»,- ասում են կոչի հեղինակները: Նրանց անձնական կարծիքով իրենք` կամավորները, անկախ նույնիսկ տարիքից ու ֆիզիկական վիճակից, իրավունք չունեն ձեռքերը ծալած նստելու եւ սպասելու, թե թշնամու դիպուկահարները կամ դիվերսիոն ջոկատները քանի նոր զոհ են մեզ պատճառելու:

«Քանի որ պատերազմն ավարտված է դե յուրե, սակայն դե ֆակտո ավարտված չէ,- ասվում է դիմումում,- Շիրակի մարզի բոլոր կամավորական ազատամարտիկներին կոչ ենք անում զորակցել Հայկական բանակին եւ լինել հայ զինվորների ու հրամանատարների կողքին պաշտպանական առաջին գծում` պատերազմում ձեռք բերած մեր գիտելիքներն ու փորձը պրակտիկորեն փոխանցելու ժամկետային զինծառայողներին, ինչպես նաեւ նրանց տրամադրելու բարոյահոգեբանական աջակցություն: Կարեւոր է, որ զինվորներն ու հրամանատարները զգան, որ մենք` կամավորական ազատամարտիկներս, ոչ միայն հոգով, այլեւ գործով իրենց կողքին ենք որպես հավասար ավագ ընկեր զինվորներ»:

Գ. Մ.

# «Հայկական Կարիտասի» կլինիկան կշարունակի գործել

«Հայկական Կարիտաս» հասարակական կազմակերպությունն ամփոփեց «Գործարարությունից բարեգործություն մեկ քայլ է...» բարեսիրական նախաձեռնության արդյունքները, որի նպատակն էր իր հովանու ներքո 2002 թվականից գործող եւ տարեկան 5000 այցելություն ապահովող «Առողջության առաջնային պահպանման կենտրոնի» համար հայթայթել 20 տոկոսի չափով տեղական ներդրումներ, որպես հովանավորների կողմից ծրագրի հետագա ֆինանսավորման նախապայման:

Ինչպես տեղեկացվեց այս առիթով հրավիրված մամուլի ասուլիսում, նախաձեռնության շրջանակներում իրենք դիմել են 43 ձեռնարկությունների, նրանցից աջակցություն են տրամադրել 10, որոնց կազմակերպությունն իր շնորհակալությունը հայտնեց: Ներդրման նվազագույն չափ սահմանված է եղել 100 հազար դրամը, կենտրոնի հետագա գործունեության համար ներդրումներ կատարել են «Իգիթ» կաթնամթերքի գործարանը, «Թուրվանդ», «Գյումրի-գարեջուր» ՍՊԸ-ները, «Արմենտելը», «Ակբա-կրեդիտ ագրիկոլ», «Պրոկրեդիտ» բանկերը, այլ տնտեսվարողներ: Նրանց աշխատակիցներին հնարավորություն կընձեռվի շարունակաբար օգտվելու կլինիկայի ծառայություններից:

1995 թվականից «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությունը Շիրակի, Գեղարքունիքի, Լոռու մարզերում եւ Երեւանում իրականացնում է բազմաբնույթ բարեգործական գործունեություն` աջակցելով ամենակարիքավոր եւ խոցելի խմբերի առաջնային կարիքների բավարարմանը: Հանրային առողջության պահպանումը «Հայկական Կարիտասի» գործունեության կարեւորագույն ուղղություններից մեկն է համարվում: Գյումրու եւ հարակից շրջանների սոցիալապես անապահով բնակչության առողջապահական կարիքներին ծառայող «Առողջության առաջնային պահպանման կենտրոնը» որպես այլընտրանքային բուժհաստատություն մատուցում է տարաբնույթ անվճար բժշկական ծառայություններ, նաեւ տնային այցեր ժամանակավորապես անշարժունակ հիվանդներին: Իրականացվում են երիտասարդ ընտանիքների ֆիզիկական եւ հոգեկան առողջության պահպանմանն ուղղված ծրագրեր, շահառուներին անհրաժեշտության դեպքում տրամադրվում են նաեւ անվճար դեղորայք ու բժշկական պարագաներ:

Գ. Մ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 581841, 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը` «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

“AZG” Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Վրացերենի դասաժամերի ավելացում ի հաշիվ հայերենի

Անցած ուսումնական տարում Վրաստանի կրթության նախարարությունը մի նոր «անակնկալ» մատուցեց հայոց դպրոցներին: Գրչի մեկ հարվածով տարրական դասարաններում կրճատվեցին հայերենի դասաժամերը: Եթե մինչ այդ վրացերենի համար շաբաթական նախատեսված էր երեք ժամ, հիմա՝ վեց ժամ: Իսկ հայերենին հատկացված վեց ժամը «իջեցվել է» մեկ ժամով:

Այսինքն՝ հայերենի դասաժամերը պակասեցվել են: Թեեւ Վրաստանի կրթության նախարարը պնդում է, թե վրացերենի դասաժամերը հայերենի հաշվին չեն ավելացվել, բայց փաստը մնում է փաստ, որ այդպես է: Ստացվում է, որ ջավախահայությունը կամաց-կամաց (հատկապես մատաղ սերունդը) հեռանում է իր արմատներից: Եթե այդպես չէ, ինչո՞ւ նույնիսկ մանկապարտեզներում վրացերեն են ուսուցանում, այն դեպքում, երբ մսուր-մանկապարտեզի թոթովախոս երեխան դեռ մայրենիով է դժվարանում բարբառել: Բայց դա չարյաց փոքրագույնն է, որովհետեւ արդեն 5-6 տարի արգելված է հայերեն դասագրքերի մուտքը Ջավախք, էլ չենք ասում՝ թերթերը:

Այդ նույն նախարարը ջավախահայերի սիրտը շահելու կամ աչքերին թոզ փչելու համար խոսացել էր, թե 2011-2012 ուսումնական տարում հայերենի դասաժամերի քանակը ոչ թե կմնա նախկինը, այլ կավելացվի՝ հասնելով շաբաթական 7-8 ժամի: Իհարկե, նման «հրաշք» տեղի չունեցավ, բայց ուրիշ «հրաշքներ» ու «անակնկալներ»՝ որքան ուզեք:



Նման խնդիրների եւ մտահոգությունների շուրջը զրուցեցինք Ախալքալաքի Դ. Դեմիրճյանի անվան հայկական հանրակրթական դպրոցի մայրենի լեզվի եւ գրականության երկարամյա ուսուցիչ (այժմ արդեն թոշակառու), վաստակաշատ մանկավարժ Վաչագան Ռստակյանի հետ, ով 50 տարվա կենսափորձ ունի: Այսօր նա համալրել է գործազուրկների շարքերը, որովհետեւ փորձ է արել վերոնշյալ հիմնահարցերին առարկել: Մինչ մեր զրույցին անցնելը ասենք, որ Ջավախքում «սեւ» ցուցակի մեջ ոչ միայն նա է հայտնվել, այլեւ ուրիշ շատերը, ովքեր համարձակվում են խոսել իրենց հուզող խնդիրներից՝ լինի կրթական, մշակութային, հոգեւոր, ինչու չէ, նաեւ քաղաքական: Ցավալի է, որ Վ. Ռստակյանի ճակատագրին են արժանացել երկու տասնյակ մանկավարժներ: Նման «ջարդը» շարունակվում է անմիտ կերպով:

**Խոսքը տանք պարոն Ռստակյանին:**

- Ցավով պիտի նշեմ, որ հայկական դպրոցների համար նախատեսված դասագրքերը կազմվում են Թբիլիսիում,- ասում է Վ. Ռստակյանը,- էլ չեմ ասում՝ ծրագրերի, մեթոդական ձեռնարկների, դիտակտիկ պարագաների մասին: Այդ դասագրքերը, լինի մաթեմատիկա, քիմիա, կենսաբանություն, երկրաչափություն, հեղեղված են այնպիսի տերմիններով, որոնք անհարիր են, անընդունելի հայ երեխայի հոգուն, մտքին, միջավայրին, կենցաղին: Այդ ամենը միտումնավոր է արվում, որպեսզի հայ երեխան ներքաշվի վրացական միջավայր:

Վրաստանի ներկայիս իշխանությունների վարած քաղաքականությունը այն է, որ հատկապես մատաղ սերնդին բռնի կերպով սովորեցնեն վրացերեն: Ոչ ոք դեմ չէ, որ տիրապետենք երկրի պետական լեզվին, բայց դա չպիտի արվի պարտադրաբար եւ մայրենի լեզվի հաշվին:

Այսպես, Վրաստանի օրենսդրությունը այնպիսին է, որ դե յուրե արդեն հայոց դպրոց հասկացությունը գոյություն չունի, որովհետեւ կրթության օրենքի 5-րդ հոդվածը սահմանում է, որ Վրաստանի հանրակրթական դպրոցներում դասավանդման լեզուն վրացերենն է: Նշանակում է՝ նրանք կամաց-կամաց փորձում են դասավանդվող առարկաները (երեւի բացառությամբ մայրենի լեզվի եւ գրականության) վրացականացնել: Էլ չենք խոսում հայոց պատմություն առարկայի մասին, որը հանվեց նաեւ արտաժամյա պարապմունքների ծրագրերից:

Վերադառնալով դասագրքերին՝ ասեմ, որ քանիցս առաջարկություն է եղել՝ թեկուզեւ Թբիլիսիում դրանք կազմվեն-տպագրվեն, բայց գոնե համատեղ՝ հայ եւ վրացի մասնագետների համաձայնությամբ:

Եվ եթե մայր հայրենիքը տարիներ շարունակ Վրաստանի հայկական դպրոցների համար անհրաժեշտ քանակությամբ դասագրքերը անվճար էր տրամադրում, հիմա այդ նույն Թբիլիսիից հրամցվող յուրաքանչյուր դասագրքի արժեքը կազմում է 3-4 հազար դրամ:

2011 թվականի օգոստոսին Ջավախք այցելեց Հայաստանի կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը: Մենք մեծ հույսեր էինք կապում այդ այցի հետ: Եղան հանդիպում, զրույց, առաջարկություններ որոշ կնճռոտ հարցերի վերաբերյալ: Անցել է գրեթե մի տարի, եւ ոչ մի դրական տեղաշարժ չի նկատվում:

… Արդեն պատմության գիրքն են անցել ուսուցիչների վերապատրաստման դասընթացները: Եթե դրանք նույնիսկ արվում են, ապա՝ ձեւականորեն:

Դպրոցների մանկավարժների գերակշիռ մասը միջին տարիքի են կամ տարեցներ: Երիտասարդ մասնագետների հոսքը դեպի դպրոց հավասար է զրոյի, որովհետեւ Երեւանում բարձրագույն մանկավարժական կրթություն ստացած երիտասարդը դժվար թե վերադառնա ծննդավայր, նման պայմաններում չի աշխատի, քանի որ վրաց լեզվի ուսուցիչները, որ հիմնականում դրսից են, տասնապատիկ ավելի աշխատավարձ են ստանում եւ այլեւայլ արտոնություններից օգտվում:

Լռում են տեղական իշխանությունները, ժողովուրդը, որովհետեւ վախի մթնոլորտ է, որովհետեւ իրավունքներից խոսելը թանկ կնստի նրանց վրա…

Լռում է նաեւ Հայաստանը…

Գրի առավ

ՌԱԶՄԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆԸ

# Հայտնի են դարձել բջջային հեռախոսներ գնողների միջեւ ՎիվաՍել-ՄՏՍ-ի անցկացրած խաղարկության հաղթողների անունները

Մայիսի 14-ից հունիսի 10 ՎիվաՍել-ՄՏՍ-ի սպասարկման կենտրոններից հեռախոս ձեռք բերած գնորդների միջեւ անցկացված խաղարկության հաղթողները ստացել են իրենց նվերները:

Տրամադրվել է 288 մրցանակ: Խաղարկության գլխավոր մրցանակակիրն ստացել է 2012թ.-ի Եվրոպայի ֆուտբոլի առաջնության հաղթող երկիր՝ Իսպանիա մեկնելու ուղեգիր (խաղարկությունը հայտարարելու պահին հաղթող երկիրը դեռեւս հայտնի չէր): Մյուս 287 մասնակիցները ՎիվաՍել-ՄՏՍ-ից ստացել են շարժական կապի միջոցներ: Մասնավորապես՝ հինգ BlackBerry 9700, հինգ Google Nexus S, քսանհինգ MTS Ego, հիսուն MTS 551 հեռախոս, երկու HTC Flyer պլանշետային համակարգիչ եւ երկու հարյուր «ՄՏՍ կոնեկտ դայմոնդ» USB մոդեմ:

Խաղարկությանը կարող էին մասնակցել բոլոր նրանք, ովքեր




ս.թ. մայիսի 14-ից հունիսի 10 ՎիվաՍել-ՄՏՍ-ի սպասարկման կենտրոններից ձեռք էին բերել MTS, HTC, BlackBerry, Samsung Galaxy Nexus կամ Samsung Google Nexus S հեռախոսներ: Հաղթողները որոշվել են համակարգչային հատուկ ծրագրի օգնությամբ՝ նշված ժամանակահատվածում գնված կապի միջոցների նույնականացման կոդերի պատահական ընտրությամբ:

Հաղթողներն իրենց նվերները ստացել են ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխամասային գրասենյակում:

ՎԵՐԱԴԱՐՁՈՒՄ

# Վանո Սիրադեղյանը Interpol-ի «Հետախուզվող անձանց» ցուցակում չկա

*1-ին էջից*

90-ականներին բազմաթիվ անձանց սպանությունը կազմակերպել են հենց բանդայի մոտ երկու տասնյակի հասնող անդամները, որոնց համաձայն մեղադրական եզրակացության, ֆինանսավորել է Սիրադեղյանը:

Համաձայն մեղադրական եզրակացության, Սիրադեղյանի հանձնարարությամբ են իրագործվել Աշտարակի շրջխորհրդի գործկոմի նախագահ Հովհաննես Սուքիասյանի, ՀՀ երկաթգծի վարչության պետ Համբարձում Ղանդիլյանի՝ ծանրացուցիչ հանգամանքներում կատարված դիտավորյալ սպանությունները: ՀՀ դատախազության քննչական վարչության պետ Վլադիմիր Գրիգորյանի սպանության իրականացնողներն էլ են եղել բանդայի անդամները: Արմեն Տեր-Սահակյանի եւ Վանո Սիրադեղյանի անունները շրջափվում են բազմաթիվ սպանություններում, իսկ գործով մեղադրական եզրակացությունն ավելի քան 300 էջ է կազմում:

Սերգեյ Գալոյանի մեկնաբանությամբ՝ Արմեն Տեր-Սահակյանի քրեական գործը վեց ամիս առաջ մեկ դատարանից մյուս դատարան փոխադրելու ժամանակ կորել է:

ՀՀ դատական դեպարտամենտի հասարակայնության հետ ծառայության պետ Արսեն Բաբայանի խոսքերով՝ Վանո Սիրադեղյանի գործն առանձնացված է Տեր-Սահակյանի քրեական գործից եւ գտնվում է դատական դեպարտամենտի արխիվում: Բաբայանը նաեւ հավելում է, որ 2005-ից Տեր-Սահակյանի գործը ՀՀ գլխավոր դատախազությունում է:

«Ոչ մի քրեական գործ չի անհետացել, դրանք երկուսն էլ կան: Արմեն Տեր-Սահակյանի գործը 2005-ից դատախազության պահանջով գտնվում է գլխավոր դատախազությունում, իսկ Արմեն Տեր-Սահակյանի գործից առանձնացված Վանո Սիրադեղյանի քրեական գործը կասեցված է, քանի որ Վանո Սիրադեղյանը գտնվում է փախուստի մեջ եւ նրա նկատմամբ հայտարարված է հետախուզում»:

Մինչդեռ ՀՀ գլխավոր դատախազության մամուլի խոսնակ **Սոնա Տռուզյանի** ներկայացմամբ՝ իրենց գերատեսչությունում ոչ մի քրեական գործ չկա, որը կվերաբերի Արմեն Տեր-Սահակյանին կամ Վանո Սիրադեղյանին:

Թե որտե՞ղ է Վանո Սիրադեղյանը՝ հայտնի չէ: Նրա նախկին թիկնազորի պետ Սուրեն Սիրունյանը հավաստիացնում է՝ Վանոն ողջ է եւ շարունակում է ստեղծագործել: Սիրունյանը հիշեցնում է, որ Վանոն այն անձն է, ում ներքին գործերի նախարար եղած տարիներին Հայաստանում օրենքով գողեր, քրեակատարողական հիմնարկներում «զոն նայողներ» չեն եղել, վերացել են երկրում հնչող կրակոցները: «Հետեւաբար այդ մարդն իրավունք ունի ապրելու իր երկրում», ասում է Սիրունյանը՝ հավելելով, որ Սիրադեղյանը կվերադառնա Հայաստան, երբ լինեն նպաստավոր պայմաններ: Նպաստավոր պայմաններ ասելով նա նկատի ունի դատական համակարգի բարելավում, երբ քաղաքացին կարողանա ապացուցել իր անմեղությունը: Սիրունյանը համոզված է՝ Սիրադեղյանը զերծ չի մնա կանգնել դատարանի առջեւ, քանի որ պատրաստ կլինի բացահայտել երեւույթներ, որոնք կապված են իր եւ ոչ միայն իր անձի հետ: Նախկին թիկնազորի պետի խոսքերով՝ այն ժամանակ արդարադատության համակարգը թափանցիկ ու արդար չէր, եւ Սիրադեղյանը անհետացել է՝ մթնոլորտից ելնելով:

Թիկնազորի պետը նաեւ հիշում է Վանո Սիրադեղյանի հետ վերջին հանդիպման օրը՝ 2000թ. ապրիլի 3: «Այդ օրը ՀՀՇ վարչությունից դուրս գալուց հետո մենք երկու մեքենայով ուղեւորվեցինք դեպի Մյասնիկյան պողոտայում գտնվող Սիրադեղյանի տուն: Վանո Սիրադեղյանն իր անձնական մեքենայով էր: Հասնելով տուն Վանո Սիրադեղյանը դուրս եկավ եւ ինձ հանձնարարեց, որ թիկնազորին ուղարկեմ տուն: Այն ժամանակ պարզ էր, որ Սիրադեղյանի բնակարանը հատուկ ծառայությունները վերահսկում են»:

Սիրունյանը հիշում է, որ հետո Սիրադեղյանի հետ է եղել մինչեւ Սունդուկյանի թատրոնի շենք հասնելը: «Մենք բաժանվեցինք, եւ դրանից հետո որեւէ տեղեկություն չունեմ նրանից»:

«Խնդրում եմ ձեզ, որ լինեք բոլորով միասին, ոչ մի բանի մասին չմտածեք, իմ ձեռքերը մաքուր են»: Ըստ Սիրունյանի՝ սա Վանո Սիրադեղյանի վերջին խոսքն է եղել, երբ նա որոշել է լքել Հայաստանը:

«Սիրադեղյանը մեքենայում թողել էր իր գլխարկը, ինչը պատճառ էր դարձել, որ 5 օր լինեմ ոստիկանությունում: Իմ վրա փորձարկեցին «Հոկտեմբերի 27-ի» գործով հատուկ Հայաստան բերված ստի դետեկտորը: Ես տվեցի ցուցմունքներ, այդ սարքը հաստատեց, որ ես ճիշտ եմ ասել, թեւ բնական է, որ միտումնավոր սխալ տեղեկություն եմ տվել», հայտարարեց Սիրունյանը՝ շեշտելով, որ անցել է 12 տարի, չի վախենում նման հայտարարություն անելուց, ավելին՝ տվյալն պահին է ստիպել այդպես վարվել:

Սիրունյանը նաեւ հավելեց, որ ՀԱԿ-ին ձեռնտու չէ որեւէ կերպ աջակցել Վանոյի վերադարձին: Նրա մեկնաբանությամբ՝ առաջին հերթին ՀՀՇ վարչության նախագահ Արամ Մանուկյանին ձեռնտու չէ Վանոյի վերադարձը: «Երբ առաջին անգամ գլխավոր դատախազը պետք է ԱԺ-ում միջնորդեր Վանոյին ձերբակալելու համար, Արամ Մանուկյանն անձամբ է խնդրել Վանոյին, որ չմասնակցի կամ կողմ քվեարկի ձերբակալությանը, քանի որ այդ ժամանակ մշակույթի փոխնախարար էր եւ վախենում էր կորցնել պաշտոնը», ասաց Սիրունյանը՝ հերքելով, թե Սիրադեղյանին օդանավակայան է ճանապարհել ներկայիս ոստիկանապետ Վովա Գասպարյանը:

Հիշեցնենք, որ օրեր առաջ ոստիկանությունում տեղի ունեցած ասուլիսի ժամանակ փոխոստիկանապետ Հունան Պողոսյանը հայտարարեց, որ Վանո Սիրադեղյանին փնտրելու համար միջազգային հետախուզում է հայտարարված, սակայն եթե նա ինչ-որ հրաշքով հայտնվի Հայաստանում, ապա կձերբակալվի:

Հետաքրքրական է, որ Interpol-ի կայքում, «Հետախուզվող անձանց» բաժնում չկարողացանք գտնել Վանո Սիրադեղյանի անունը:

# Հայաստանում Հունաստանի առաջին դեսպան Լեոնիդաս Խրիսանտոպուլոսի գիրքը՝ «Հեղաշրջում Հայաստանում»

***Վերջերս անգլերեն բնագրից՝ Edit Engelmann-ի կողմից, գերմաներենի է թարգմանվել եւ Մայնի Ֆրանկֆուրտում տպագրվել է Հայաստանում Հունաստանի առաջին դեսպան Լեոնիդաս Խրիսանտոպուլոսի գիրքը հետեւյալ վերնագրով՝ «Հեղաշրջում Հայաստանում (Մի դիվանագետի ժամանակագրությունը)»:***

**Հեղինակը չի հավակնել գրական գործ ստեղծել, այլ անկեղծորեն եւ հայ ժողովրդի նկատմամբ հարգանքի եւ սիրո դիրքերից ելնելով, ինչպես նաեւ հարազատի խուլ ցավով, կարեկցանքով, եւ որպես ժամանակավկա, կարող իմացությամբ շարադրել է հայ ժողովրդի համար բախտորոշ 1993-94 թվականների Հայաստանի իրականությունը, իր՝ դեսպանի, դիվանագետի կարեւոր դիտումները եւ տեղեկությունները ժամանակի որոշ իրադարձությունների վերաբերյալ: Նա անդրադառնում է նաեւ հայ ժողովրդի, Արցախի, Հայ առաքելական եկեղեցու, Էջմիածնի, Գառնիի, Գեղարդի, Ծիծեռնակաբերդի եւ այլ պատմական վայրերի, ինչպես նաեւ Հայաստանում ապրող հույն եւ քուրդ փոքրամասնությունների պատմությանը: Հիանում է Հայաստանի հիասքանչ, երբեմն ձմռան խստաշունչ բնությամբ: Հպարտանում է հայ ժողովրդի հարուստ մշակույթով: Նա գրում է.**

«Հայաստանն ինձ վրա մեծ տպավորություն է թողել հատկապես իր արվեստի հարստությամբ: Ես հազվադեպ եմ հանդիպել մի երկրի, այդքան քիչ բնակչությամբ, որը, սակայն, տված լինի այդքան մեծ թվով երաժիշտներ, օպերայի երգիչներ, նկարիչներ, քանդակագործներ եւ գրողներ: Հայաստանն ունի անցյալից ժառանգած հարուստ մշակույթ: Ես զարմացած եմ այս երկրի ծաղկող արվեստով՝ իր ամբողջ ողբերգությունով հանդերձ» (էջ 127):

**Այս գիրքը հետաքրքրական է մի քանի առումով: Նախ հեղինակը չի սահմանափակվում միայն 1993-94 թվականների իրադարձությունների անկողմնակալ շարադրումով, այլ լայնորեն անդրադառնում է Արցախի պատմական անցյալին, հակիրճ եւ հավաստի պարզաբանում է ծագած կոնֆլիկտի բուն էությունը, լուսաբանում է պատերազմի պատճառները: Նա անկեղծորեն անդրադառնում է տարբեր երկրների շահերի բախումներին եւ մրցակցությանը Կովկասում: Արեւմուտքի, ինչպես նաեւ Եվրոմիության երկրներից մեկի դեսպանի տեղեկություններով, տարբեր երկրների խմբակցությունների հայտարարությունների եւ կոչերի մեջբերումներով, դիվանագետի իր նրբանկատ գրչով ընթերցողին է թողնում եզրակացնելը, թե նրանք որքան անտարբեր են հարցի էության նկատմամբ: Եվ իրենց շահերից ելնելով՝ նրանք չեն ցանկանում թափանցել կոնֆլիկտի խորքերը: Պատրաստ չեն հասկանալ Արցախի ժողովրդի պայքարի բնույթը, նրա ձգտումի, կամքի ուժգնությունը, խորությունը ընկալել եւ տեսնել նրա պատրաստակամությունը, հաստատակամությունը, իր զավակների արյան գնով ուղղել պատմական անարդարությունը, վերահաստատել իր ինքնորոշման իրավունքը, պաշտպանել իր նորաստեղծ անկախ պետականությունը: Նա ընդգծում է նաեւ Եվրոմիության շահերի առկայությունը Կովկասում եւ չի թաքցնում իր համակրանքը դրանց նկատմամբ: Անկեղծորեն լուսաբանում է մեծ տերությունների, ինչպես նաեւ Եվրոմիության ընկերակցության սառնասիրտ եւ անտարբեր վերաբերմունքը, որոնք չեն ցանկանում ընդառաջել Հայաստանի կառավարության խնդրանքին՝ դրամական օժանդակության միջոցով կայունացնել «դրամի» արժույթը Հայաստանում:**

**Այս գիրքը նաեւ մի քանի հետաքրքրական տեղեկություններ է պարունակում, (իմ կարծիքով՝ ամենակարեւորը), որոնք կարելի է ակնառու եւ հավաստի փաստեր համարել մեզ մոտ վերջերս հանդես եկող այն անձնավորությունների փաստարկների դեմ, որոնք ինչ-ինչ դրդապատճառներից ելնելով ցանկանում են հայ-ռուսական պայմանագիրը եւ համապատասխան այդ պայմանագրի՝ ռուսական զորքերի տեղակայումը Հայաստանում հարցականի տակ առնել եւ այն հայ ժողովրդի շահերի դեմ համարել: Պետք չէ հմուտ եւ փորձառու դիվանագետ, քաղաքական գործիչ, կամ գիտակ պատմաբան լինել, որ գիտենալ, թե որքան սնանկ է նման քարոզչությունը եւ թե որքան վտանգավոր հետեւանքներ կարող է ունենալ հայ ժողովրդի ապագայի եւ գոյատեւման համար:**

**Ցանկալի կլիներ, որ այս գիրքը անգլերեն բնագրից թարգմանվեր հայերենի: Կարեւոր եմ համարում այստեղ մի քանի մեջբերումներ անել գրքից:**

...Դեռեւս 1920 թվականի նոյեմբերի 30-ին Սովետական կառավարությունը Ադրբեջանում ընդունեց Լեռնային Ղարաբաղի տարածքը որպես Հայաստանի մաս: 1921 թվականի հունիսին նույնանման որոշում ընդունեց Սովետական Հայաստանի կառավարությունը:

1921 թվականի հուլիսի 5-ին ռուսական կոմունիստական կուսակցության բյուրոն Կովկասում (Ստալինի ղեկավարությամբ, մեջբերումը՝ թարգմանչից) որոշեց Լեռնային Ղարաբաղի տարածքը մտցնել Սովետական Ադրբեջանի կազմում: Երկու օր հետո Սովետական Ադրբեջանի իշխող հեղափոխական կոմիտեն որոշում ընդունեց այդ տարածքի մի մասին հատուկ կացություն շնորհել եւ ստեղծեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը: Այս տարածքը Սովետական Հայաստանի Հանրապետության տարածքից բաժանված էր միայն մի բարակ միջանցքով...

...1989 թվականի դեկտեմբերի 1-ին Սովետական Հայաստանի Գերագույն խորհուրդը պահանջեց Սովետական Սոցիալիստական Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի միացումը:

Հարցը սաստկացավ 1991 թվականի ապրիլին, երբ ռազմական ուժերը (Սովետական Միության ներքին գործերի բանակի, մ.թ.) Բաքվի եւ Մոսկվայի հրամանատարությամբ սկսեցին Լեռնային Ղարաբաղի հյուսիսում հայկական գյուղերը հայաթափել: 24 գյուղերի բնակիչներ աքսորվեցին: Այդ պատճառով Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի իշխանությունները ստիպված եղան ժամանակին ռազմական ջոկատներ ստեղծել, որոնք հետագայում Լեռնային Ղարաբաղի բանակի սիրտն էին կազմելու:

Սովետական Միության փլուզումով՝ 1991 թվականին, Լեռնային Ղարաբաղի հարցը դարձյալ միջազգային խնդիր դարձավ:

1991 թվականի օգոստոսի 30-ին Ադրբեջանի ՍՍ Հանրապետության գերագույն խորհուրդը հռչակեց Ադրբեջանի Հանրապետության անկախության վերականգնումը: Մի քանի օր հետո Շահումյանի շրջանի օրենսդրական խորհուրդը հետեւեց այդ օրինակին եւ հռչակեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: 1991 թվականի հոկտեմբերի 1-ին Ադրբեջանը հաստատեց իր անկախությունը, իսկ նոյեմբերի 23-ին չեղյալ հայտարարեց Լեռնային Ղարաբաղի ինքնավարությունը:

1991 թվականի դեկտեմբերի 10-ին Լեռնային Ղարաբաղը անկախության հանրաքվե կազմակերպեց: Ընտրողների 82,2 տոկոսը մասնակցեց ընտրություններին: 99,89 տոկոսը քվեարկեց Ադրբեջանից անկախանալու համար...

...1993 թվականի ապրիլի 7-ին Եվրոպայի ընկերակցությունը կատարեց հետեւյալ հայտարարությունը.

«Ընկերակցությունը եւ իր անդամ երկրները լրջորեն մտահոգված են Լեռնային Ղարաբաղի կոնֆլիկտի հետեւանքով՝ Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության հարաբերության ներկայիս պղտորացման կապակցությամբ: Ընկերակցությունը եւ իր անդամ երկրները ցավ են հայտնում Քելբաջարի եւ Ֆիզուլիի շրջաններում պատերազմի ընդլայնման կապակցությամբ: Հայաստանի կառավարությունից անհապաղ պահանջվում է իր ազդեցությունը գործադրել Լեռնային Ղարաբաղում, զորքերը հանել ադրբեջանական տարածքներից եւ դադարեցնել բոլոր ռազմական գործողությունները...» (էջ 19):

### 1993-ի հոկտեմբերի Մոսկվայի դեպքերը եւ դրա հավանական ազդեցությունը Հայաստանի վրա

Հոկտեմբերի սկզբին ռուս այն պատգամավորները, ովքեր Ելցինի դեմ էին, Մոսկվայում Խասբուլատովի եւ Ռուցկոյի գլխավորությամբ գրավեցին խորհրդարանի շենքը եւ պահանջեցին նախագահի պաշտոնազրկումը: Հոկտեմբերի 4-ին տանկերը ռմբակոծեցին խորհրդարանը, բանակը ազատագրեց խորհրդարանը, խռովարարները ձերբակալվեցին, այդպիսով վերջացավ այդ ճգնաժամը...

Երեւանում Լեւոն Տեր-Պետրոսյանը զանգահարեց Ելցինին եւ նրան հայտնեց իր լրիվ օժանդակությունը: Նա Ազգային անվտանգության խորհրդի նիստ հրավիրեց, որը Հայաստանի համար հատուկ անվտանգության իրավիճակ սահմանեց: Հոկտեմբերի 5-ին Տեր-Պետրոսյանը ինձ ասաց. Ազգային անվտանգության խորհուրդը բանակին հնարավոր ամենաբարձր պատրաստականության աստիճանի էր բարձրացրել, որպեսզի ռուսական զորքերի հավանական հեռացումից հետո կարողանան երկիրը Թուրքիայի ներխուժումից պաշտպանել: Հիմնվելով տարբեր տեղեկությունների վրա, որոնք տարբեր աղբյուրներից էր ստացել, Տեր-Պետրոսյանը համոզված էր, որ Թուրքիան առիթը օգտագործելու է, Մոսկվայում որեւէ լուրջ դեպքի պարագայում, գրավել Հայաստանը, քրդական հարցի կամ Նախիջեւանին պաշտպանելու պատրվակով... (էջ 88):

...Նույն հարցի կապակցությամբ հոկտեմբերի 11-ին Ֆրանսիայի դեսպանուհին ինձ պատմեց, որ համաձայն ֆրանսիական գաղտնի գործակալության տեղեկությունների, գաղտնի պայմանագիր է եղել Անկարայի եւ Խասբուլատովի՝ մի ոմն չեչեն մուսլիմի միջեւ: Այնտեղ ասվում է, որ, եթե նա իր պաշտոնին մնա, ապա Թուրքիային իրավունք է տալու, Հայաստանում՝ քրդական հարցի պատրվակով, սահմանափակ գործողություններ կատարել, ինչպես նաեւ Վրաստանում՝ Աբխազիայի ապահովությունը պաշտպանել: Ըստ Ֆրանսիայի տեղեկությունների, Թուրքիայի հարձակումը Հայաստանի վրա պետք է կատարվեր այն ժամանակ, երբ Խասբուլատովը ռուսական զորքերը Հայաստանից դուրս հանած կլիներ (ընդգծումը՝ թարգմանչի): Հետագայում այս տեղեկությունը հաստատեց իմ՝ Միացյալ Նահանգների ամերիկյան գործընկերը: Որպեսզի այս՝ Հայաստանի համար այնքան կարեւոր հարցում, պատկերը ամբողջացնեմ, ցանկանում եմ այստեղ կարճ մեջբերել, թե հոկտեմբերի 12-ին Հայաստանի պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը ինձ ինչ է հաղորդել:

Մենք տեղեկություն ունեինք, որ Մոսկվայում ինչ-որ կարեւոր դեպքեր են տեղի ունենալու: Այս կապակցությամբ արդեն սեպտեմբերի սկզբներին Հայաստանի սահմանում ուժեղացվել էին թուրքական զորքերը: Նույն ժամանակ Թուրքիան իր զորամասերը Ադրբեջանում եւ Նախիջեւանում լրացրել էր երկու բրիգադով եւ 15 ուղղաթիռով: Թուրքիան արդեն սահմանում լարվածություն էր ստեղծում, եւ իր զինվորները թեթեւ հրազեններից կրակ էին բացել հայկական սահմանի վրա: Ռուսական զորքերը ձեռնպահ էին մնացել եւ կրակահերթին չէին պատասխանել: Սեպտեմբերի 22-ին գեներալ Հայրեթին Ուզունի գլխավորությամբ OSZE-ի ստուգող հանձնախմբի շրջանակներում մի զինվորական պատվիրակ էր ժամանել Հայաստան եւ խնդրեց այցելել Ադրբեջանին եւ Թուրքիային սահմանամերձ հայկական շրջանները: Սակայն հայկական զինվորական իշխանությունները թուրք զինվորականին իրավունք չտվին ստուգումներ կատարել հայկական տարածքներում, այլ միայն թույլատրեցին բարձրաթռիչք օդանավով դիտել այդ տարածքները, այնպես որ նրանց համար անհնար էր այդ այցելության ընթացքում տեղեկություններ ձեռք բերել Հայաստանի պաշտպանության վերաբերյալ: Կառավարության համար պարզ էր, որ Թուրքիան չէր համարձակվի հարձակում կատարել, քանի դեռ ռուսական զորքերը Հայաստանում տեղակայված կլինեին: Այդ պատճառով էլ Սարգսյանը հոկտեմբերի 2-ի եւ 3-ի կրիտիկական շաբաթավերջում ամբողջ ժամանակ կապի մեջ էր իր ռուս պաշտոնյա գործընկերոջ հետ, որը նրան վստահեցրեց, որ ռուսական զինվորական հրամանատարությունը պաշտպանում է Ելցինին, եւ ռուսական զորքերը դուրս չեն բերվի Հայաստանից (էջ 90):

**Պարոն Խրիսանտոպուլոսի պաշտոնավարության ժամանակաշրջանը կարճատեւ է լինում Հայաստանում: Այլ պաշտոնի նշանակվելու պատճառով, նա 7 ամիս պաշտոնավարելուց հետո, վերադառնում է Աթենք:**

Կիրակի՝ փետրվարի 20-ին, Մոսկվա թռչող օդանավը բարձրացավ: Օդանավից մի անգամ եւս նայեցի Արարատի գեղեցիկ համայնապատկերին: Իրականում ես չէի ցանկանում գնալ այստեղից: Երբ օդանավը սլացավ վեր, ես իմ մեջ մի տարօրինակ դատարկություն էի զգում, ասես սիրտս Հայաստանում էի թողել եւ դրա փոխարեն ինձ հետ վերցրել էի Հայաստանի խնդիրները, որոնք բոլորն էլ դեռ լուծման կարիք ունեին (էջ 186):

**ՍԱՄՎԵԼ ՀՈՎԱՍԱՓՅԱՆ**
**Բեռլին**

ԱՍՏՈՒՐԻԱ

## Իսպանացի հայասեր Արմանդո Ֆերնանդես



Այս տարի եւս իր հանգիստն անցկացնելու համար Հայաստան էր շտապել իսպանացի հայասեր Արմանդո Ֆերնանդեսը: Մի առիթով նրա մասին գրել եմ արդեն եւ հոդվածիս համար «Մարդ, որին պետք է ճանաչենք» վերնագիրն ընտրել: Խոսքն աստուրիացի մեր բարեկամի մասին է, որն իր գրադարանում ավելի քան 600 գիրք ունի՝ մեր Նաիրյան երկրին նվիրված, ով հարազատ իր Աստուրիայում Եղեռնի օրվա կապակցությամբ հրաշալի մի երեկո էր կազմակերպել... Ինքն իրեն «հասարակ քաղաքացի» բնորոշումն է տալիս, թեեւ երբ հարցը գիտելիքներին եւ օրվա նորությունների վերլուծություններին է վերաբերում, հատկապես հայ իրականության հետ կապ ունեցող, պարզվում է, որ բնավ հասարակ չէ նա, ինչպես ինքն իրեն է ներկայացնում: Նրա հետ հանդիպած եւ, ինչպես գրեթե բոլորը, նրանով հիացած ու տպավորված հայաստանաբնակ երիտասարդներից մեկը ընդարձակ մի նյութ էր նվիրել ոչ սովորական այս մարդուն, որտեղ նշում էր մասնավորապես. «Ինքն իր ճամփան ունի գնալու, եւ նա ուղղակիորեն գնում է այդ ճանապարհով առանց մեզ, բայց եւ մեր, այլ ոչ թե հենց իր համար»: Այս պարագայում փոքր-ինչ այլ է երեւանցի մեր հայրենակից Նարինե Ադամյանի կարծիքը. «Երբ կրկին կխոսեք նրա հետ, խնդրում եմ փոխանցել անպայման, որ մենք հիացած ենք նրանով, որ նա մեր հոգում, մտածելակերպի մեջ, մեր կյանքի ճանապարհի վրա խոր հետք է թողել»: Ասեմ, որ փոխադարձ է դա, եւ իբրեւ այդպիսին շատ կարեւոր նշանակություն ունի հետեւյալ հանգամանքը. Ա. Ֆերնանդեսի պես մարդիկ Թուրքիայի հետ ի սկզբանե սերտ հարաբերություններ հաստատած իրենց այս երկրում վաղուց էին արդեն Հայաստանի դեսպանները հանդիսացել, երբ մեր երկիրը տակավին ձեռք չէր բերել անկախություն: Ամեն անգամ, երբ նա հիացմունքով է վերադառնում Երեւանից, դա շուտով իր արձագանքն է ունենում այն միջավայրում, որն իրենն է, իր համար հարազատ է, եւ որտեղ հաճախակի է այլեւս շոշափվում «Արմենիա՛» անունը: Իսկ դրա դերակատարության էական առավելությունների մասին դեռեւս մի քանի տարի առաջ հայտնի իսպանացի մտավորական Խոսե Անտոնիո Գուռիարանն էր արտահայտվել. «Երկու գիրք՝ ես, երեքը՝ գրող Գոնսալո Գուարչը, մի քանի խոսք՝ Արմանդո Ֆերնանդեսը, եւ կտեսնեք, թե ինչպես են իսպանացիներն օրեցօր ավելի ու ավելի շատ տեղեկանում Հայաստանի մասին, երբ որ առայժմ քչերը նրա մասին ինչ-որ բան գիտեն»: Նկատի ունենա՞նք այս դիտողությունը: Ցանկալի է ու... պետք է: Պարտավոր ենք, ի վերջո, մեր բարեկամներին ճանաչել, որոնց շնորհիվ ու ներկայությամբ նաեւ մեր դիվանագիտությունն է իր համար մի հավելյալ օգնություն ստանում:

**ԱՐԹՈՒՐ ՂՈՒԿԱՍՅԱՆ**
**Իսպանիայի լրագրողների միությունների ֆեդերացիայի անդամ**

# Արթուր Ռասիզադեն կուրացե՞լ է

«Պոլիգոն» տեղեկատվական-վերլուծական կենտրոնի հաղորդմամբ՝ Ադրբեջանի վարչապետ Արթուր Ռասիզադեի «մի աչքը լրիվ կուրացել է, մյուսի տեսողությունն էլ հազիվ 40 տոկոս է»: Ըստ տեղեկությունների՝ նա բուժման կուրս է անցել «Ղրիմում, բայց արդյունքները գոհացուցիչ չեն»: Ադրբեջանական լրատվամիջոցը, հղում անելով «միանգամայն վստահելի աղբյուրների», գրել է, որ հուլիսի սկզբից Ռասիզադեն չի կատարում պաշտոնեական պարտականությունները: Նրա փոխարեն կառավարության որոշումները ստորագրում է առաջին փոխվարչապետը: Վերջինս էլ ընդունել էր հուլիսին Ադրբեջան այցելած՝ Չեռնոգորիայի եւ Վրաստանի վարչապետներին:

Երեկ Ադրբեջանի կառավարության լրատվական ծառայությունը հերքել է «վարչապետ Արթուր Ռասիզադեի առողջական վիճակի մասին որոշ լրատվամիջոցների տարածած լուրերը»: Ըստ այդմ, հուլիսի սկզբներին Ռասիզադեն «օգտագործել է տարեկան արձակուրդից ընդամենը մի շաբաթ, եւ այդ ընթացքում նրան փոխարինել է առաջին փոխվարչապետը, ինչը բնական ընթացակարգ է»: Կառավարության լրատվական ծառայության ասելով՝ «վարչապետ Արթուր Ռասիզադեն անցել է աշխատանքի, նա առողջության խնդիրներ չունի եւ իրեն առույգ է զգում»:

Այս հայտարարությունը կասկածի տեղ է թողնում: Իր առողջական վիճակի եւ «առույգության» մասին կարող էր հայտարարել անձամբ Ռասիզադեն: Կամ էլ բավական էր, որ նա երեւար հեռուստաէկրանին, որպեսզի Ռասիզադեի կուրանալու մասին տարածված տեղեկատվությունն ինքնին հերքվեր: Իշխանությունները բավարարվել են կառավարության լրատվական ծառայության մակարդակով, ինչը, բնականաբար, վստահություն չի ներշնչում:

Առաջին անգամ չէ, որ Արթուր Ռասիզադեի շուրջը ինտրիգային իրավիճակ է ստեղծվում: Նա Ադրբեջանի իշխող վերնախավի հնաբնակներից է: Վարչապետի պաշտոնն Ռասիզադեն ստացել է Հեյդար Ալիեւի օրոք: 2003թ. նա «հրաժարվել է» պաշտոնից հօգուտ Իլհամ Ալիեւի եւ զբաղեցրել առաջին փոխվարչապետի աթոռը: Նախագահի «ընտրվելուց» հետո Իլհամ Ալիեւը Ռասիզադեին վերադարձրել է նախկին պաշտոնին:

Ադրբեջանի սահմանադրությամբ վարչապետը զուտ տեխնիկական ֆիգուր է: Երկրում «գործադիր իշխանությունը պատկանում է նախագահին», եւ նա էլ փաստորեն գլխավորում է կառավարությունը: Նույն սահմանադրությունը, սակայն, վարչապետին է վերապահում նախագահի լիազորությունները վերջինիս մահվան, հրաժարականի կամ պաշտոնանկության դեպքում՝ մինչեւ նոր ընտրությունների անցկացումը: Այս իմաստով Ադրբեջանում վարչապետի պաշտոնը շատ առանցքային է:

Ըստ որոշ տեղեկությունների՝ հարեւան երկրի իշխող վերնախավը երրորդ ժամկետով Իլհամ Ալիեւի նախագահության հարցում տրոհվել է երկու ճամբարի: Մի մասում այսպես կոչված նախիջեւանյան կլանն է, որ նրան հորդորում է կանգ չառնել միջազգային կարծիքի առաջ եւ «վստահաբար առաջադրել թեկնածությունը», մյուսում «ռեֆորմատորների թիմն է»: Վերջիններիս կարծիքով՝ հանուն երկրի միջազգային վարկանիշի Իլհամ Ալիեւը չպետք է երրորդ ժամկետով առաջադրվի: Նրանք առաջարկում են մեկ ժամկետով իշխանությունը փոխանցել Մեհրիբան Ալիեւային:

Տեսականորեն դա հնարավոր է: Այդուհանդերձ, ըստ որոշ ակնարկների, նախիջեւանյան կլանը երկյուղ ունի, որ Մեհրիբան Ալիեւան, դառնալով նախագահ, կճնշի իրեն: Երկու խմբավորումների միջեւ «բանագնաց» է Իլհամ Ալիեւի աշխատակազմի ղեկավար Ռամիզ Մեհթիեւը:

Հայտնի չէ, թե վարչապետ Ռասիզադեն ինչ դիրք է բռնել: Բայց, նկատի ունենալով վարչապետի պաշտոնի կարեւորությունը, չի բացառվում, որ նրա «կուրության» մասին լուրերը տարածում է մրցակից կլաններից մեկը, որպեսզի Ռասիզադեի հրաժարականի կամ պաշտոնանկության հիմքեր ստեղծվեն:

Ի՞նչ զարգացում կունենա այս ամենը: Հնարավոր է, որ մոտ ապագայում Արթուր Ռասիզադեն տարիքի կամ առողջական վիճակի հանգամանքով թողնի վարչապետի պաշտոնը: Եվ թե ո՞ր՝ նախիջեւանյան, թե Փաշաեւների՝ Մեհրիբան Ալիեւի հայրական տան, կլանի ներկայացուցիչը կնշանակվի այդ պաշտոնում, ըստ այդմ էլ թերեւս հնարավոր կդառնա դատողություններ անել երրորդ ժամկետով նախագահի թեկնածու առաջադրվելու կամ չառաջադրվելու Իլհամ Ալիեւի ծրագրերի մասին:

Վ. Ա.

# Խառնաշփոթ Լոնդոնի օլիմպիադայի ապահովության հարցում

**Բրիտանական «Ինդիփենդենտ» թերթին հաջողվել է հայթայթել ներքին օգտագործման համար նախատեսված մի զեկույց, որից պարզ է դառնում, թե ինչպիսի խառնաշփոթ է տիրում G4S ընկերությունում, որը ստանձնել է Լոնդոնի օլիմպիադայի անվտանգության ապահովման պարտականությունը:**

**Ֆիրմայի ղեկավար Նիկ Բակլան խորհրդարանականներին ապշեցրել է այն հայտարարությամբ, որ ինքը մտադիր չէ վերադարձնել 57 մլն ֆունտ ստեռլինգ գումարը, որը իբրեւ հոնորար էր ստացել կառավարչական ծառայությունների դիմաց: Այդ հայտարարությունից մեկ օր առաջ Օլիմպիական զբոսայգում աշխատանքի վարձված պահապանների գրեթե 40 տոկոսը հերթափոխի դուրս չէր եկել:**

**Խաղերի անվտանգության հարցերը տնօրինողներից մեկը թերթին հայտնել է, որ վերջին օրերին իրավիճակը գրեթե չի բարելավվել: Անձնակազմի 1/3-ը այդպես էլ հնարավոր չի եղել ապահովել: Կատարված աշխատանքին վերաբերող ամենօրյա հաշվետվությունից երեւում է, որ ցերեկային ժամերին աշխատուժի պակասը կազմում է 38 տոկոս, իսկ գիշերային ժամերին՝ 31 տոկոս: Ըստ որում, բազմաթիվ աշխատակիցներ տվյալ աշխատանքի համար պահանջվող համապատասխան վարժանքներ չեն անցել եւ չունեն անհրաժեշտ հմտություններ:**

**Կապալառուներից մեկը խոստովանել է, որ իրեն անհրաժեշտ անվտանգության ծառայության աշխատակիցների 1/3-ը անհետ կորել է, իսկ նրանց փոխարեն իր մոտ ուղարկել են ուսանողների, այն էլ՝ մեծ մասամբ աղջիկների: Ինքը ստիպված է եղել հրաժարվել նրանցից: «Նրանք ունեն նվազագույն պատրաստություն, աղջնակներ են, 20 տարեկան էլ չկան, եւ ես անհարմար կզգայի նրանց ծառայության ուղարկել գիշերները», խոստովանել է կապալառուն:**

**Ուեստ Միդլանդսի ոստիկանության ֆեդերացիայի նախագահն իր հերթին խոստովանել է, որ իրեն սարսափեցնում է G4S-ի անձնակազմի անբանիմացությունը: «Բանը միայն այն չէ, որ G4S-ը չի վարձել եւ չի պատրաստել բավարար թվով աշխատակիցների: Նույնիսկ նրանց ներկայացրած անձինք չկարողացան նորեկներին սովորեցնել ամենատարրական բաներ», ասել է պաշտոնյան:**

**G4S ընկերությունում հայտարարել են, թե չեն կարող մեկնաբանել հիշյալ զեկույցում արծարծված առանձնահատուկ հարցերը:**

# Դատավոր Գարսոնը դարձել է Ասանժի խորհրդատուն

**WikiLeaks հանրահայտ կայքէջի հիմնադիր Ջուլիան Ասանժը իսպանացի նախկին դատավոր Բալտասար Գարսոնին վարձել է որպես իրավական հարցերի գծով խորհրդատուի: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը՝ վկայակոչելով Էկվադորի արտգործնախարար Ռիկարդո Պատինոյին:**

**Գարսոնը Ասանժին խորհուրդներ կտա Էկվադորում նրա քաղաքական ապաստան ստանալու հարցում: Cryptome.org կայքէջի հաղորդման համաձայն, Գարսոնն արդեն այցելել է Լոնդոնում Էկվադորի դեսպանատուն, որտեղ ներկայումս գտնվում է Ասանժը: Քննարկվել է Ասանժին «չհիմնավորված հայցերից» պաշտպանելու ռազմավարությունը:**

**Ասանժը Էկվադորից քաղաքական ապաստան խնդրեց հունիսի 19-ին: Այդ օրվանից նա Լոնդոնում Էկվադորի դեսպանատանն է: WikiLeaks-ի հիմնադիրը ստիպված տվյալ քայլին դիմեց այն բանից հետո, երբ բրիտանական դատարանը որոշեց նրան արտաքսել Շվեդիա: WikiLeaks-ը հայտնի է մասնավորապես Պենտագոնի եւ պետդեպարտամենտի տասնյակ հազարավոր գաղտնի փաստաթղթերի հրապարակումներով, որոնք զայրացրել են ԱՄՆ-ի իշխանություններին: Ասանժը վախենում է, որ Շվեդիային հանձնվելու դեպքում ինքը կարող է հայտնվել ԱՄՆ-ում, որտեղ իրեն սպառնում է երկարատեւ բանտարկություն:**

**Էկվադորի կառավարությունը հայտարարել է, որ մանրազնին քննության կառնի Ասանժի գործը նախքան նրան քաղաքական ապաստան տրամադրելու որոշման ընդունումը:**

**Դատավոր Բալտասար Գարսոնը հայտնի է նրանով, որ ժամանակին մերկացրել է Չիլիի նախկին բռնապետ Աուգուստո Պինոչետին: Գարսոնը վարել է նաեւ մի շարք ուրիշ աղմկահարույց գործեր: Մասնավորապես՝ նա պահանջել էր անձեռնմխելիությունից զրկել Իտալիայի նախկին վարչապետ Սիլվիո Բեռլուսկոնիին, ինչպես նաեւ փորձել էր հետաքննել Իսպանիայում Ֆրանսիսկո Ֆրանկոյի վարչակարգի հանցագործությունները:**

*ՄՈՍԿՎԱ*

# Ռուսաստանը Սիրիայից դուրս է բերում իր զինվորական փորձագետներին

## *Մարտեր Հալեպում եւ Դամասկոսի հյուսիսում*



Ռուսաստանի ղեկավարության վերջին քայլերը վկայում են, որ Մոսկվան պատրանքներ չունի իշխանությունը պահպանելու նախագահ Բաշար Ասադի հնարավորությունների հարցում: Ռուսաստանն արդեն սկսել է նախապատրաստվել իր մերձավորարեւելյան վաղեմի դաշնակցի տապալման հեռանկարին:

Ամերիկյան վարչակազմի աղբյուրներ վկայակոչելով՝ իսրայելական «Եդիոտ Ահրոնոտ» թերթը գրում է, որ Ռուսաստանը սկսել է Սիրիայից դուրս բերել զինվորական մասնագետներին եւ ապամոնտաժել հետախուզական սարքավորումները: Դրանց մեծ մասը գտնվում է Դամասկոսում եւ Գոլանի բարձունքների սիրիական կողմում:

Դադարեցվում է Իսրայելի սահմանի մոտ գտնվող էլեկտրոնային լրտեսման կայանի աշխատանքը: Թերթի տեղեկությունների համաձայն, այդ ռազմակայանները Ռուսաստանի լիակատար վերահսկողության տակ էին, իսկ սարքավորումների սպասարկու անձնակազմում ռուսաստանցի հետախույզներ էին, ճարտարագետներ եւ տեխնիկներ:

Սիրիական բանակի հետ համագործակցությունը դադարեցնում են նաեւ Մոսկվայի գործուղած զինվորական խորհրդատուները: Ամերիկյան հետախուզության տվյալներով, ներկա փուլում ինչպես մասնագետները, այնպես էլ սարքավորումները կենտրոնացած են Սիրիայի ծովափնյա շրջաններում: Ի դեպ, ներկայումս դեպի սիրիական Տարտուս նավահանգիստ է շարժվում ռուսական ծովուժի նավերի մի ջոկատ:

Մոսկվայի եւ Դամասկոսի տարաձայնությունների եւս մեկ արտահայտությունը դարձավ հուլիսի 24-ին ՌԴ արտգործնախարարության տարածած հայտարարությունը: Այնտեղ Սիրիայի իշխանություններին հիշեցնում են քիմիական զենքի կիրառման անթույլատրելիության մասին: «Սիրիան միացել է Ժնեւի արձանագրությանը, որն արգելում է խեղդող, թունավոր կամ այլ համանման գազերի կիրառությունը որպես պատերազմի վարման միջոցներ», ասվում է փաստաթղթում:

ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը իր հերթին արտահայտել է Սիրիայի իրադրության սեփական ընկալումը: Նրա խոսքերով, քաոսից խուսափելու միակ հնարավորությունը երկու կողմերի կրակի անհապաղ դադարեցումն է: Միայն դրանից հետո կարելի է սկսել անցումային կառավարության ձեւավորումը: «Եթե երկրի ներկայիս ղեկավարությունը իշխանությունից հեռացվի հակասահմանադրական միջոցներով, ապա ընդդիմությունը եւ ներկայիս ղեկավարությունը թերեւս պարզապես փոխեն իրենց տեղերը. մեկը կդառնա ղեկավարություն, մյուսը՝ ընդդիմություն: Մենք չենք ուզում, որ իրադրությունը զարգանա քաղաքացիական պատերազմի առավել արյունալի սցենարով եւ շարունակվի բազում տարիներ ինչպես Աֆղանստանում», հայտարարել է Պուտինը:

Երեկ Թուրքիան ժամանակավորապես փակեց Սիրիայի սահմանը, իր որոշումը հիմնավորելով այդ երկրի ներքաղաքական վիճակով եւ ապահովության նկատառումներով: Միաժամանակ դիտորդները նշում են, որ սահմանի փակումը վերաբերում է միայն բեռնառաքումներին, իսկ սիրիացի փախստականները առաջվա պես կկարողանան Թուրքիա մուտք գործել իրենց ոչ պաշտոնական երթուղիներով:

Ռոյթեր գործակալությունը հաղորդում է, որ Սիրիայի կառավարական բանակի բազմահազարանոց մի զորախումբ երեկ երկրի հյուսիս-արեւմուտքից՝ Իդլիբի նահանգից, սկսել է շարժվել դեպի Հալեպ: Տնտեսական այդ խոշորագույն կենտրոնի մի շարք շրջաններ մնում են ապստամբների ձեռքին: Սիրիական բանակը եւ օդուժը հարձակում են ձեռնարկել քաղաքն ապստամբներից մաքրելու նպատակով: Միաժամանակ հաղորդվում է, որ երեկ առավոտյան կատաղի մարտեր են ծավալվել մայրաքաղաք Դամասկոսից 8 կմ հյուսիս գտնվող Ալ Թել քաղաքի մատույցներում: Նախագահ Ասադին հավատարիմ ուժերը սկսել են հրետակոծել եւ հրթիռակոծել ապստամբների դիրքերը, իսկ բուն քաղաքում, որտեղ մոտ 100 հազար մարդ է ապրում, խուճապ է սկսվել, եւ բնակիչներից շատերը արդեն լքել են իրենց տները:

Պ. Ք.

# «Ավանդական Տերյանական օրը՝ Գանձայում»

*«Օ՜, հեռո՜ւ ընկեր իմ, օ՜, Վահա՛ն Տերյան...»*
***Եղիշե Չարենց***

Հարյուր տարուց ավել է, որ հայ պոեզիայի հարուստ երկնակամարում լուսաստղի պես շողշողում է ընդամենը 10-15 տարի ստեղծագործած Վահան Տերյան պոետի աստղը եւ դեռ հազարամյակներ պիտի լուսավորի մեր ժողովրդի քնարերգության հավերժական ուղին: Համաշխարհային գրականության այս խոշորագույն դեմքը, մեր սիրելի Տերյանն իր ժողովրդին տալով մի անսպառ հարստություն, փոխարենն ընդամենը մեկ պատգամով է դիմել մեզ՝ «Բարի՛ հիշեք ինձ ձեր սրտում, մնա՜ք բարով, մնա՜ք բարով»:

Վահան Տերյանի ծննդավայրում՝ Վրաստանի Նինոծմինդայի շրջանի Գանձա գյուղում, արդեն 46-րդ անգամ, հուլիսի 21-ին տեղի ունեցավ «Տերյանական օր» ավանդական միջոցառումը՝ Տերյանական դաշտահանդեսը: Տերյանի ծննդավայրը, որտեղ անցել է պոետի մանկությունը, նորից էր շնչում Տերյանով, նորից Տերյանի ոգին թեւածում էր Գանձայում, կարծես լսելի էին պոետի շշուկն ու շրջյունը, եւ շատ-շատերն էին եկել հավաստելու իրենց խորին հարգանքն ու սերը հայ գրականության այդ հիմնասյուներից մեկի, լեգենդ դարձած պոետի նկատմամբ: Հավաքվել էին Մեծ պոետին իրենց հարգանքի տուրքը մատուցելու տերյանապաշտ ու տերյանասեր բազմաթիվ հյուրեր «աշխարհի յոթ ծայրերից»՝ Հայաստանից ու Վրաստանից, Ռուսաստանի Դաշնության ամենատարբեր ծայրերից ու մի շարք այլ երկրներից, Երեւանից ու Արցախից, Թբիլիսիից ու Նինոծմինդայից, Ախալքալաքից ու Ախալցխեից: Միջոցառմանը ներկա էին Հայաստանի գրողների միության պատվիրակությունը՝ միության նախագահ Լեւոն Անանյանի, Վրաստանի գրողների միության պատվիրակությունը՝ միության քարտուղար Դավիթ Շեմոքմեդելու գլխավորությամբ, Հայաստանի ու Վրաստանի խորհրդարանների պատգամավորներ, Սամցխե-Ջավախեթիի նահանգապետ Իվանե Ծիկլաուրին, Հայաստանի Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանը, Նինոծմինդայի եւ հարեւան վարչական շրջանների ղեկավարները, Վրաստանի նախագահի խորհրդականներ, պետական, գրական ու մշակութային բազմաթիվ գործիչներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Ուրախացնող էր երիտասարդության, պատանիների ու աղջիկների մեծաթիվ մասնակցությունը, ովքեր եկել էին արտահայտելու իրենց սերն ու նվիրումը մեծանուն բանաստեղծին:



Նախքան դաշտահանդեսի սկսվելը, պոետի նախնիների կառուցած եկեղեցում, Տերյանին նվիրված պատարագ մատուցեց Հայ եկեղեցու Վրաստանի թեմի առաջնորդ **Վազգեն եպս. Միրզախանյանը**: Միջոցառումը բացեց Գանձայի դպրոցի տնօրեն **Սարգիս Դուրգարյանը**: Ներկաներին ողջույնի խոսքով դիմեց Հայաստանի գրողների միության նախագահ **Լեւոն Անանյանը**: Ջերմ ելույթով հանդես եկավ Վրաստանի գրողների միության քարտուղար **Դավիթ Շեմոքմեդելին**, ով նաեւ արտասանեց Վահան Տերյանին նվիրված իր բանաստեղծությունները: Անվանի պոետին երախտիքի խոսքեր ասաց «Տերյան» մշակութային կենտրոնի նախագահ **Առուշան Հակոբյանը**, ներկայացնելով նաեւ կենտրոնի բազմաճյուղ գործունեությունը Վահան Տերյանի գործերի հրատարակման, նրան նվիրված միջոցառումների կազմակերպման եւ անցկացման ուղղությամբ:

«Տերյանական օր» միջոցառման հանդիսավոր մասից հետո դաշտահանդեսը շարունակվեց գեղարվեստական մասով, որը վերածվեց ժողովրդական տոնախմբության: Այն վարեց Հայաստանի Հանրապետության ժողովրդական արտիստ **Ազատ Գասպարյանը**: Ելույթ ունեցան «Տերյան» մշակութային կենտրոնի նախաձեռնությամբ Երեւանից ժամանած «Կարին» ու Արցախից ժամանած «Արցախի բալիկներ» համույթները, Գանձայի մշակույթի տան գեղարվեստական խումբը: Մինչեւ ուշ երեկո Գանձայի, Ջավախքի ու Երեւանից ժամանած ստեղծագործական տարբեր խմբերի, առանձին անհատների, դպրոցականների ուժերով կատարվեցին պարեր, երգեր, բնության գեղեցկության հետ զուգընթաց հնչեցին Տերյանի գեղեցկագույն ու նուրբ, հուզական ու սքանչելի ստեղծագործությունները, նրա խոսքերով գրված երգեր, ներկայացվեցին Տերյանին նվիրված բազմաթիվ բանաստեղծություններ:

Հյուրերի համար հոգեցունց էր այցելությունը Մեծ պոետի տունթանգարան. նրանք վայելեցին նաեւ Փարվանա լճի յուրատեսակ գեղեցկությունը:

**Ա. ՀԱԿՈԲՅԱՆ**
**«Տերյան» մշակութային կենտրոնի նախագահ**

# Սիրուն Երեցյանի արվեստը՝ կանանց պաշտպանության խորհրդանիշ

Թեքեյան մշակութային միության Լոս Անջելեսի մասնաճյուղի կազմակերպությամբ Հայաստանյայց եկեղեցվո արեւմտյան թեմի Զորայան թանգարանում հունիսի 14-ին տեղի է ունեցել նկարչուհի Սիրուն Երեցյանի կտավների ցուցահանդեսի բացումը եւ այդ առթիվ լույս տեսած ալբոմի շնորհանդեսը: Ըստ «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթում հրատարակված **Գեւորգ Քյոշկերյանի** լրատվության, ցուցասրահը բազմամարդ է եղել, բացման խոսքով հանդես է եկել նկարչուհու որդին՝ **Առնո Երեցյանը**, որ հատկապես անդրադարձել է իր մոր աշխատանքային կարգապահությանը եւ էթիկային, տան առօրյա գործերին զուգահեռ հմտորեն կառավարելով նաեւ իր սեփական «Ռոսլին Արտ» պատկերասրահի աշխատանքները, եւ ապա բեմ է հրավիրել Լոս Անջելեսի Կալիֆոռնիա համալսարանի անգլերեն լեզվի դասախոս, դոկտ. **Արփի Սարաֆյանին**:

Վերջինս նկարչուհուն ներկայացրել է որպես կանանց իրավունքների պաշտպանի: «Սիրունի արվեստը ճիչ է կանանց հանդեպ գործադրված անարդարությունների», ասել է նա, ավելացնելով, որ նկարչուհին չի փորձում թաքցնել ճշմարտությունը: Նա սոցիալական արատները ներկայացնում է այնպես, ինչպես դրանք գոյություն ունեն:

«Ռոսլին Արտ» պատկերասրահում «Ջեմինի Դիզայն» տաղավարի սեփականատեր եւ Երեցյանի երկարամյա գործընկեր Հարրի Վահան Մեսրոպյանն էլ խոսել է Սիրունի մանրանկարչության եւ թռչնագրերի մասին: Այնուհետեւ անդրադարձել է Սիրունի մանկության տարիներին՝ Բեյրութում:

Վերջում Հովնան արք. Տերտերյանը նշել է, որ կտավների իմաստը զգացմունքներ առաջացնելու մեջ է, եւ որ նկարիչներն ընդհանրապես նկարելու պահին Արարչից են ներշնչվում եւ կատարելության հասնում:

Ավելացնենք, որ Սիրուն Երեցյանը այրին է Գլենդեյլում «Ապրիլ» գրախանութի սեփականատեր վաղամեռիկ Հարութ Երեցյանի: Բացի նկարչությունից Սիրունը նաեւ բանաստեղծություններ է գրում եւ ունի սիրո, հավատարմության եւ ընկերության նվիրված բանաստեղծությունների հրատարակված մեկ հատոր:

**Հ. Ծ.**



# Գալյա Նովենցին խոնարհումի եւ երախտագիտության օրեր




Արդեն երեք օր է Գալյա Նովենց արտիստի մահը հարազատների հետ սգում են նրա արվեստի երկրպագուները, հիշում նրա կերտած անկրկնելի մեծ ու փոքր դերերը, որոնք դարձան արվեստի մնայուն արժեքներ:

Սիրված դերասանուհու հոգեհանգիստը կայացավ Կոնդ թաղամասի Սուրբ Հովհաննես եկեղեցում: Գալյա Նովենցին այդ օրը մի քանի ժամ հրաժեշտ տվեցին մեր երկրի բարձրաստիճան այրերը՝ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյան, փոխնախագահ Հերմինե Նաղդալյան, ՀՀ նախագահի տիկին Ռիտա Սարգսյան, մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյան, Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյան, տեղակալներ Վանո Վարդանյան, Կամո Արեյան, պատգամավորներ, մտավորականներ, հյուրեր եւ շատ ուրիշներ:

Երեկ Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնը վերջին անգամ ընդունեց ու պատվով ճանապարհեց դեպի երկինք, ինչպես «Մեր մանկության տանգոն» ֆիլմում Գալյա Նովենց-Սիրանույշն էր երազում «մի օր դեպի երկինք բարձրանամ ու այս աշխարհին այնտեղից նայեմ...»: Բեմի կենտրոնում վեհաշուք լուռ ու խաղաղ, իր բնավորության համաձայն, արտիստուհին «խաղաց» իր հրաժեշտի դերը: Մինչդեռ մոտ 1,5 ամիս առաջ հենց այդ բեմում Գալյա Նովենցը փայլեց Ջոն Պատրիկի «Տարօրինակ միսիս Սեւիջը» ներկայացման մեջ՝ կերպարանավորելով միսիս Սեւիջին: Եթե իմանար Գալյա Նովենցը, որ այդ երկու պրեմիերաները այդպես էլ կմնան հայ թատրոնի գանձարանում, գուցե դրանք կրկնվեին, եթե... Ափսո՜ս, հազա՜ր ափսոս, որ այսուհետ չենք վայելելու հայ մոր, հայ կնոջ կերպարները մարմնավորող զգացմունքային արտիստի կենդանի խաղը:

Առավոտից չէր դադարում արտիստուհուն վերջին հրաժեշտ տվողների երթը: Գալյա Նովենցի ստեղծագործական ուղու մասին ջերմ ու անմոռանալի խոսքեր ասացին ԱԿԱ նախագահ **Դավիթ Մուրադյանը**, արվեստաբան **Էմանուել Մանուկյանը**, կոմպոզիտոր **Տիգրան Մանսուրյանը**: Գալյա Նովենցի մահվան առիթով ստացվել էին մի քանի տասնյակ ցավակցական հեռագրեր ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանից, վարչապետ Տիգրան Սարգսյանից, ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանից, Վրաստանի նախագահի աշխատակազմից, Ռուսաստանի Դաշնության դեսպանատնից, կինոմատոգրաֆիստների միություններից, միջազգային կինոփառատոների տնօրեններից, Լիբանանի ՀԲԸՄ-ից, Բեյրութի Վ. Փափազյան թատերախմբից (ի դեպ, թատերախմբի ատենապետ Տրդատ Ավետիսյանը եւ Մարո Քելվիզյանը ժամանել են Երեւան ու մասնակցել սգո արարողություններին), ԱՄՆ-ից, Բելառուսից եւ այլ միություններից ու անհատներից: Հուզիչ ու ջերմ խոսքերով էր իր ուղերձը հղել **Գարեգին Բ** ամենայն հայոց հայրապետը. Նովենց արտիստին համարելով անմար աստղ, որը փայլատակեց ու այդպիսին էլ մնաց բոլորի սրտերում ու հուշերում: Իսկ կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանը սիրված արտիստուհու հիշատակին, հուզմունքը հազիվ թաքցնելով, ասաց. «Մենք կորցրինք մի արվեստագետի, մի աննման հայուհու, մեծ հոգու տեր մի մարդու: Այսօր նրա կորստով հայ թատրոնի տանիքը կարծես բաց մնաց եւ ապագա սերունդը՝ երիտասարդները, պիտի ջանան այդ բացը լրացնել, Գալյայի թողած ավանդույթներով ու վարպետության դասեր քաղելով այն ամենից, ինչ Գալյա արտիստից ժառանգել են...»:

Իսկ երբ հնչեց Տիգրան Մանսուրյանի երաժշտությունը, թատրոնից դուրս բերեցին Գալյա Նովենցի դին ու երկարատեւ ծափերով վերջին ճանապարհը ուղեկցեցին նրա բազմահազար երկրպագուները, խաղընկերները, մտավորականներն ու հյուրերը: Սիրված ու անմոռանալի դերասանուհու հոգեհանգիստ եւ վերջին հրաժեշտի կարգ մատուցեցին Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Հովնան եպս. Հակոբյանը՝ հոգեւոր դասի շարականների ներքո:

Երբ ծառը կտրում են, նոր է երեւում նրա բնի հաստությունը... այս պարագայում նույնպես՝ երբ անդառնալի կորցրինք Գալյա Նովենցին, նոր հասկացանք, թե ինչ ենք կորցնում:

Մխիթարվում ենք միայն նրա թողած հարուստ ժառանգությամբ:

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**


## ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԹԱՏՐՈՆ

### Սոս Սարգսյանի ղեկավարությամբ

2012 թվականի հուլիսի 28-ին, ժամը 12:00-ին Սոս Սարգսյանի ղեկավարությամբ գործող «Համազգային» պետական թատրոնի նոր շենքի կառուցման վերաբերյալ տեղի կունենա հանրային քննարկում: Հասցեն՝ Ամիրյան 26, Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտի շենքում:

***Բանախոսներ՝***
*ՀՀ, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ*՝ **Սոս Սարգսյան**
*Երեւանի գլխավոր ճարտարապետ*՝ **Նարեկ Սարգսյան**
*ՀՀ վաստակավոր ճարտարապետ*՝ **Հրաչ Պողոսյան**
Քննարկումը կվարի «Համազգային» թատրոնի տնօրեն՝ **Վարդան Մկրտչյանը**

*Տեղեկատու հեռախոս*՝ **50-10-60**

# Սեւադա Արզումանյան. «Պայքարեցինք մինչեւ վերջ, սակայն խնդիրը լուծել չհաջողվեց»



***Ինչպես արդեն տեղեկացրել ենք, չեմպիոնների լիգայի մրցաշարում անհաջող հանդես եկավ Հայաստանի չեմպիոն «Ուլիսը»՝ 2 հանդիպումներում էլ միեւնույն 0-1 հաշվով զիջելով Մոլդովայի բազմակի չեմպիոն «Շերիֆին»: Մոլդովական ակումբի պաշտոնական կայքը հրապարակել է մարզիչների կարծիքը հանդիպման մասին: Առաջինը ներկայացնում ենք Սեւադա Արզումանյանի պատասխանները:***

- Նախ կցանկանայի շնորհավորել «Շերիֆին» հաջորդ փուլ դուրս գալու առիթով եւ հաջողություններ մաղթել հետագա հանդիպումներում: Ինչ վերաբերում է խաղին, ապա կարող եմ ասել, որ իմ ֆուտբոլիստները պայքարեցին մինչեւ վերջ, ցանկանում էին լուծել իրենց առջեւ դրված խնդիրը, սակայն չստացվեց: Սա ֆուտբոլ է, մենք պարտվեցինք, Աստված թող «Շերիֆին» հաջողություն տա, իսկ մենք կշարունակենք մեր ելույթները Հայաստանի առաջնությունում:

**- Առաջին խաղի արդյունքը ձեզ պարտադրում էր ռիսկի դիմել ու ավելի ագրեսիվ գործել: Սակայն դուք մեկ հարձակվողով խաղացիք: Դա պայմանավորված էր «Շերիֆի» ներուժո՞վ, թե՞ ֆունկցիոնալ առումով թիմը պատրաստ չէր ագրեսիվ գործելու:**

- Այս հարցը «Շերիֆի» հետ առաջին խաղից առաջ էր մեզ շատ անհանգստացնում: Առաջնության ընթացքում մենք մի քանի հարձակվողներից զրկվեցինք, որոնք վնասվածքներ ստացան: «Շերիֆի» հետ խաղից առաջ մենք տեխնիկական պատճառներով չկարողացանք նոր հարձակվողների ընդգրկել թիմում: Ցանկանում էինք 2 ագրեսիվ հարձակվողներ դուրս բերել խաղադաշտ, սակայն առջեւի գծում հիմնախնդիրներ ունենք: Մեր եզրային ֆուտբոլիստները եւս հարձակողական ոճի խաղացողներ են: Երեւանում հաղթելուց հետո «Շերիֆը» պետք է սեփական հարկի տակ ավելի վստահ ու ագրեսիվ խաղ ցուցադրեր: Մենք պետք է սովորենք օգտագործելու ազատ գոտիները: Առաջին խաղակեսում եղան պահեր, սակայն չկարողացանք դրանք օգտագործել: Առաջին խաղակեսում մեր բախտը բերեց, քանի որ կարող էինք գոլ բաց թողնել: 2 անգամ դաշտի տերերի հարվածներից հետո գնդակը դիպավ ձողին: Հույսներս դրել էինք հակագրոհների վրա, սակայն 2-րդ խաղակեսում արագությունը չբավականացրեց:

**- Դուք շատ դժգոհ էիք 11 մ-ի նշանակման պահին:**

- Չեմ կարող ստույգ ասել հպում եղավ, թե ոչ: Ինձ թվաց, որ ֆուտբոլիստը պարզապես կորցրեց գնդակը: Մրցավարներն իրենց գործն են անում, ֆուտբոլիստներն ու մարզիչները՝ իրենցը: Համոզվելու համար հարկավոր է այդ դրվագի տեսագրությունը եւս մեկ անգամ դիտել:

**- Երեւում էր, որ թիմը ջանքեր էր գործադրում տակտիկական առաջադրանքը կատարելու համար: Բաց թողած գոլից հետո «Ուլիսը» պարզապես դադարեցրեց պայքարը: Երբ «Շերիֆը» գրոհում էր, հյուրերի ֆուտբոլիստների մի մասը մնում էր մրցակցի կիսադաշտում, ինչը պաշտպանությունում ճեղքեր էր առաջացնում: Դա պայմանավորված էր հոգեբանակա՞ն, թե՞ ֆիզիկական անբավարար պատրաստությամբ:**

- Ինքս էլ կցանկանայի, որպեսզի ֆուտբոլիստները ճիշտ գնահատեին իրենց ուժերը եւ դրանք ծախսեին ըստ անհրաժեշտության: Մեզ համար արդեն կարեւոր չէր կպարտվեինք 0-1, թե 0-2 հաշվով: Մեզ անհրաժեշտ էր գոլ խփել:

*Իսկ այժմ ներկայացնենք «Շերիֆի» գլխավոր մարզիչ* ***Միլան Միլանովիչի*** *տեսակետը հակիրճ:*

*- Շնորհակալ ենք հյուրերին խաղի եւ պայքարի համար: Կարեւորը, որ հասանք արդյունքի: Շատ նյարդային խաղ էր, հատկապես առաջին խաղակեսում: Շատ էինք փոխանցումներ կատարում դաշտի կենտրոնական հատվածում՝ դրանով իսկ լրացուցիչ խնդիրներ ստեղծելով մեզ համար: Իսկ ահա 2-րդ խաղակեսում, երբ փոխեցինք մեր մարտավարությունը, կարողացանք գոլային պահեր ստեղծել: Այս ամենը հաշվի առնելով, մենք արժանի հաղթանակ տոնեցինք: Կարծում եմ, որ ֆիզիկապես եւ հոգեբանորեն «Շերիֆն» ավելի լավ էր պատրաստված այս հանդիպմանը: Պատասխան խաղից առաջ մենք առավելություն ունեինք մրցակցի նկատմամբ: Այսօր էլ վստահ խաղացինք ու հաղթեցինք:*

# Կհաղթահարվի՞ հերթական արգելքը

Եվրոգավաթների ընթացիկ խաղարկությունում Հայաստանի 4 ակումբներից երկուսը՝ «Փյունիկն» ու «Ուլիսը» չկարողացան հաղթահարել առաջին փուլի արգելքը: Ասպարեզում մնացած Գյումրիի «Շիրակն» ու Կապանի «Գանձասարը» այսօր սեփական հարկի տակ Եվրոպայի լիգայի որակավորման 2-րդ փուլի պատասխան հանդիպումները կանցկացնեն: «Շիրակը» Գյումրիում ժամը 17.30-ին կհյուրընկալի Իսրայելի «Բնեյ Եհուդային», իսկ «Գանձասարը» ժամը 19-ին «Հանրապետական» մարզադաշտում կսկսի մրցավեճը Շվեյցարիայի «Սերվետի» հետ: 2 հանդիպումներն էլ կցուցադրվեն Հանրային հեռուստատեսությամբ:

Ի՞նչ կարելի է ակնկալել մեր թիմերից պատասխան հանդիպումներում: Միանգամից ասենք, որ «Գանձասարն» ու «Շիրակը» շատ բարդ խնդրի առջեւ են հայտնվել՝ առաջին հանդիպումները տանուլ տալով միեւնույն 0-2 հաշվով: Եթե անկեղծ լինենք ու հաշվի առնենք մեր ակումբների ցուցադրած խաղը, ապա պետք է խոստովանել, որ հաջորդ փուլ մտնելու հնարավորություն գրեթե չկա: Իսկ լավատես լինելու դեպքում ավելի մեծ են պայքարը շարունակելու «Շիրակի» հնարավորությունները: Նախ «Բնեյ Եհուդան» իր ներուժով զգալիորեն զիջում է «Սերվետին», իսկ «Շիրակն» էլ ավելի կազմակերպված ու բովանդակալից խաղ է ցուցադրում, քան «Գանձասարը»: Ինչ-որ առումով «Շիրակն» առաջին խաղում ցավալի պարտություն կրեց իր չափից դուրս զգույշ մարտավարության պատճառով: Այժմ Գյումրիում հարկավոր է առաջին իսկ րոպեներից շատ ագրեսիվ խաղ ցուցադրել, մեծ ուժերով գրոհել ու ճնշում գործադրել մրցակցի դարպասի վրա՝ չմոռանալով, իհարկե, նաեւ սեփական դարպասի պաշտպանության մասին:




«Շիրակի» համար այսօրվա խաղում խնդիրը բարդանում է նաեւ նրանով, որ հանդիպմանը չեն մասնակցի կենտրոնական պաշտպան Դիդիե Կադիոն ու Անդրանիկ Բարիկյանը: Առաջինը 2 դեղին քարտ է ստացել, իսկ Բարիկյանը նախորդ խաղում հեռացվել էր դաշտից: Ի դեպ, «Գանձասարն» էլ կազմի հետ կապված կորուստներ ունի: Խաղին չեն մասնակցի թիմի ավագ Արմեն Տատինցյանը, որը 2 դեղին քարտի պատճառով որակազրկված է, եւ վնասվածք ունեցող Գեորգի Կրասովսկին:

Հատկանշական է, որ բուքմեյքերներն էլ չեն հավատում հայկական ակումբների հաջողությանը: «Շիրակի» հաղթանակը գնահատվում է 3,4 գործակցով, «Բնեյ Եհուդայինը»՝ 1,9: Ոչ-ոքին գնահատվում է 3,4 գործակցով:

«Գանձասար»-«Սերվետ» մրցավեճում հյուրերի առավելությունն ավելի ակնհայտ է: Կապանցիների հաղթանակի գործակիցը 4,33 է, «Սերվետինը»՝ 1,66: Ոչ-ոքիի համար սահմանվել է 3,5 գործակից:

ՃԱԽՄԱՏ

# Մելքումյանն առաջատարներից մեկն է

Բիլի շախմատի մրցաշարի 2-րդ տուրում Հրանտ Մելքումյանը կրկին հաղթեց Միսո Գեբալոյի հետ մրցավեճում: Իսկ Սերգեյ Մովսիսյանը հաշտություն կնքեց Մարտին Կրաեմերի հետ: 2 տուրից հետո Մելքումյանը 13 շախմատիստների հետ հարյուր տոկոսանոց արդյունքով գլխավորում է մրցաշարային աղյուսակը: 3-րդ տուրում Մելքումյանը կմրցի Յան Լե Ռուքսի հետ, իսկ Մովսիսյանի մրցակիցը կլինի Արգյադիպ Դասը:

Բիլում ընթացող գրոսմայստերական մրցաշարի 2-րդ տուրում Մագնուս Կառլսենը հաղթեց Վան Հաոյին, Էթիեն Բաքրոն էլ պարտության մատնեց Ալեքսանդր Մորոզեւիչին: Նակամուրա-Գիրի պարտիան ավարտվեց ոչ-ոքի:

2 տուրից հետո 4-ական միավորով առաջատարներն են Մագնուս Կառլսենն ու Անիշ Գիրին: 3-ական միավոր ունեն Վան Հաոն ու Էթիեն Բաքրոն, 2՝ Հիկարու Նակամուրան: Անսպասելի է Մորոզեւիչի թույլ ելույթը, որը 2 անընդմեջ պարտություն է կրել: Այս մրցաշարում հաղթանակի համար տրվում է 3 միավոր, ոչ-ոքին շախմատիստներին մեկական միավոր է պարգեւում:

# Մրցաշարում երկիշխանություն հաստատվեց

Ջերմուկում ընթացող շախմատի կանանց Գրան պրիի մրցաշարի 8-րդ տուրում Էլինա Դանիելյանը ոչ-ոքի խաղաց Եկատերինա Կովալեւսկայայի հետ ու վաստակած 4 միավորով ընթանում է 7-րդ հորիզոնականում: Իսկ Լիլիթ Մկրտչյանը պարտություն կրեց Չժան Սյունեից ու 3,5 միավորով հանգրվանեց 9-րդ հորիզոնականում:

8-րդ տուրից հետո մրցաշարում երկիշխանություն հաստատվեց: Աշխարհի ներկայիս չեմպիոնուհի Հոու Յիֆանը հաղթելով իր հայրենակցուհի Ժուան Լուֆեյին, վաստակեց 5,5 միավոր եւ հավասարվեց առաջատարին՝ Ցզյուն Վենցզյունին: Վերջինս հաշտություն կնքեց Բաթխույակ Մունգունտուլի հետ: Ոչ-ոքի ավարտվեց նաեւ Խուրցիձե-Կոսինցեւա պարտիան: 2-րդ անընդմեջ պարտությունը կրեց Համպի Կոներուն, որը խաղում էր Կատերինա Լահնոյի հետ: Վերջինս Ժուան Լուֆեյի ու Չժան Սյունեի հետ 4,5 միավորով հետապնդում է առաջատար երկյակին:

Այսօր կկայանա մրցաշարի 9-րդ տուրը: Էլինա Դանիելյանը սեւերով կմրցի Նադեժդա Կոսինցեւայի հետ, իսկ Լիլիթ Մկրտչյանը սպիտակներով կխաղա մրցաշարի առաջատարներից Ցզյուն Վենցզյունի հետ: Հոու Յիֆանի մրցակցուհին կլինի Եկատերինա Կովալեւսկայան:

# Ալեքսանդր Լուկաշենկոյին զրկեցին հավատարմագրից

Լոնդոնի օլիմպիադայի կազմկոմիտեն օլիմպիական խաղերի մասնակցության հավատարմագիր չի տրամադրել Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյին, որը նաեւ երկրի օլիմպիական կոմիտեի նախագահն է: Իսկ ըստ գործող կարգի, ազգային օլիմպիական կոմիտեի նախագահներին առանց հայցի են տրամադրում հավատարմագիրը: Բելառուսի ԱՕԿ-ը տարբեր երկրների ազգային օլիմպիական կոմիտեներին կոչ է արել խստորեն դատապարտել կազմկոմիտեի այդ որոշումը եւ հասնել դրա վերանայմանը:

2 շաբաթ առաջ «Սլավյանսկի բազար» փառատոնի բացման արարողության ժամանակ Բելառուսի նախագահը հետեւյալ կերպ էր արտահայտվել օլիմպիական խաղերի մասին. «Օլիմպիադան զիջում է մեր «Սլավյանսկի բազարին», այն քաղաքականացված է, շատ հիմնախնդիրներ կան: Իսկ այս փառատոնը ազատամտության, անկախության մի կղզյակ է: Մեր փառատոնից շատ բան կա սովորելու: Օլիմպիական խաղերը սպորտ չեն, այլ կեղտոտ քաղաքականություն են»:

Նշենք, որ ընդդիմության ներկայացուցիչների նկատմամբ կիրառված բռնարարքների, մարդու իրավունքների խախտման եւ ընտրությունների արդյունքների խեղաթյուրման համար Լուկաշենկոն հայտնվել է Եվրոմիության սեւ ցուցակում: Նրան, ինչպես նաեւ մի քանի հարյուր չինովնիկների արգելված է մուտք գործել Եվրոմիության անդամ երկրների տարածք: Այնպես որ օլիմպիական հավատարմագիրը Լուկաշենկոյի համար միակ միջոցը կլիներ Մեծ Բրիտանիա մեկնելու:

Նշենք, որ Լուկաշենկոյի օրինակը միակը չէ: Մայիսին Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադն էր բողոքում, որ իրեն թույլ չեն տալիս գտնվել Լոնդոնում օլիմպիադայի ժամանակ: Վերջերս էլ Սիրիայի ԱՕԿ-ի նախագահ Մուվաֆակ Ջումայային էին մերժել հավատարմագրի հարցում՝ պատճառաբանելով նրա լավ հարաբերությունները Բաշար Ասադի հետ:

# Բեքհեմը կմասնակցի օլիմպիադայի բացման արարողությանը

Համաշխարհային ֆուտբոլի «աստղերից» մեկը՝ Դեւիդ Բեքհեմը կմասնակցի Լոնդոնի ամառային օլիմպիադայի բացման արարողությանը: Առայժմ հայտնի չէ նրա դերակատարությունն օլիմպիադայում: Կազմակերպիչները մինչեւ վերջին պահը գաղտնի են պահում, թե ո՞ւմ է վստահվելու օլիմպիական կրակը վառելու պատիվը: Հայտնի է միայն, որ Բեքհեմը կմասնակցի հանրահայտ մարդկանց շքերթին, որը կնախորդի օլիմպիական կրակի վառման արարողությանը:

Թեեւ խաղերի հանդիսավոր բացումը նախատեսված է հուլիսի 27-ին, սակայն արդեն երեկ պաշտոնապես սկսվեցին օլիմպիական մրցումները կանանց ֆուտբոլի մրցաշարում: Առաջինը մրցասպարեզ դուրս եկան Մեծ Բրիտանիայի եւ Նոր Զելանդիայի հավաքականները: Նույն օրը պետք է կայանային նաեւ ԱՄՆ-Ֆրանսիա, Ճապոնիա-Կանադա, Կամերուն-Բրազիլիա, Կոլումբիա-ԿԺԴՀ, Շվեդիա-ՀԱՀ հանդիպումները:

Օլիմպիական խաղերը դեռեւս չսկսված, արդեն որոշակի դժգոհություններ են ծագել: Մարզիկները բողոքում են օլիմպիական ավանում կերակրի որակից: Իսկ լրագրողների միջազգային ընկերակցությունն էլ պաշտոնապես բողոք է ներկայացրել կազմակերպիչներին, որ մամուլի կենտրոնում խմելու ջուրն անվճար չէ: Մեկ շիշ ջուրն արժե մոտ 55 ռուբլի: Նշենք, որ Պեկինի օլիմպիադայի եւ Եվրո-2012-ի ժամանակ լրագրողների համար ջուրն անվճար էր:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ Օրվա հետքերով

# «Ինչու»-ների հեղեղ Սեւանի ջրերի շուրջը

*1-ին էջից*

Թերեւս մտահոգություններն էին մասամբ այլ, կանաչները այսօրվա ակտիվությունը չունեին, Սեւանն ինչ-որ տեղ հարկ եղած ուշադրությանը չէր արժանանում: Վկայաբերեմ հետեւյալ փաստը. 2002-ի մարտյան մի ցրտաշունչ օր տողերիս հեղինակը «Ա1» հեռուստաընկերության թղթակից Դիանայի եւ օպերատորի հետ այցելեց «Երեւանհէկ»: Մեզ ջերմ ընդունեցին, թերեւս մտածելով որ հերթական հերոսական աշխատանքի վերաբերյալ հաղորդում է պատրաստվելու: Բայց հենց առաջին հարցը, թե ի՞նչ ջրով է աշխատում կայանը, տնօրենի այնպիսի զայրույթն առաջացրեց, որ մենք հետագա բարդություններից խուսափելու համար խելամիտ համարեցինք հեռանալ: Չեմ պնդի, թե երիտասարդ լրագրողուհին որեւէ ձեւով լուսաբանեց պատահածը, թե ոչ, բայց որ օրեր անց հեռուստաընկերությունը փակվեց, փաստ է: Փորձերը, կապ տեսնել այցի եւ փակվելու միջեւ, ոչինչ չեն ասում, քանզի տարբեր գերատեսչություններին տարբեր տարիներին ուղղված վերեւում տրված հարցը պատասխանի չի արժանանում, լավագույն դեպքում ջրթողը դադարեցվում է: Միայն վերջին 5-6 տարիներին մասամբ բարոյականացվեց Սեւանի հանդեպ վերաբերմունքը եւ 400-500 մլն խմ ջրի դրական հաշվեկշռի արդյունքում լճի մակարդակը սկսեց բարձրանալ:



Այսօր արդեն ակնհայտ է, որ այս դրական գործընթացը խնդիրներ է ստեղծել Սեւանի ափամերձ հատվածներում առանձնատներ ունեցողների համար, որոնց բնակելիների առաջին հարկերն արդեն մասամբ ջրածածկ են: Մի պահ ընդունենք, որ այն 1903 մետրի պարագայում հիմնավոր սխալ էր, եւ լիճը պետք է հասցվի երբեմնի 1916 մետր նիշին, որը կարելի է ակնկալել մոտակա 20-ամյակում: Ինչ է արվելու այդ ժամանակ կուտակված ջուրը, արդյոք նոր բարձրացո՞ւմ է պահանջվելու: Կարծում եմ` ոչ. Սեւանն ինքը չի ների մեզ բոլորիս եւ հատկապես իր հիմնական շահառուներին` իր ջրերին սպասող հողագործներին: Ուրեմն ինչո՞ւ առավել խոհեմ եւ խելամիտ չվարվենք մեր հրաշք հարստության հետ:

Պարզվում է` ջուրն անվճար տրվում է այլ երկրի սեփականություն դարձած հիդրոհամալիրի կայաններին եւ ապա վաճառվում հայրենի հողագործներին: Այս մասին մասամբ ակնարկեց ՀՀ ԱԺ հանձնաժողովի նախագահ եւ բնապահպանության նախկին նախարար **Վարդան Այվազյանը** հուլիսի 7-ին «Ազատություն» ռադիոկայանում հյուրընկալվելու ընթացքում: Նա իր ընդդիմախոս բնապահպան ՀԱԿ-ի ներկայացուցիչ Արմենակ Դովլաթյանին դիմելով ասաց, որ կարող եք հարցնել, թե ինչու ՀԷԿ-երից գումար չի վերցվում ջրի դիմաց: ՀԱԿ-ի ներկայացուցիչը ոչ մի արձագանք չտվեց, թեեւ բարձրագույն պաշտոնյան ինքը կարող էր բացատրություն տալ: Ստացվում է, որ համալիրին ջուրն անվճար է տրվում, որովհետեւ տնօրենությունը ջրի պահանջ չի ներկայացնում, վստահ լինելով, որ Սեւանի ջուրը Արարատյան դաշտավայր հասցնելու համար այլ ուղի չկա, քան համալիրի կառույցներով բաց թողնելը: Այլ տարբերակների փնտրտուքն անիմաստ եւ էապես ծախսատար կարող է լինել, որը ՀՀ ներկայիս տնտեսությունն անզոր է լուծել: Ահա եւ մեզ «Գույք` պարտքի դիմաց» գործարքի արդյունքը, որը հայ իրականությանը զավեշտի ոլորտ է տեղափոխում:

Համանման գործընթացների արդյունքում է օրինակ, որ հստակ պատասխան չի տրվում, թե տարվա ամենատարբեր եղանակներին ինչ ջուր է հորդում «Երեւանհէկ»-ի ջրախորշից, որը մետրեր անց հայտնվում է Արմավիրի ու Արարատի մարզերով հոսող ջրանցքներում: Հրազդան գետն ու իր Մարմարիկ եւ Լուսակերտ վտակները 10-յակ խմ-ների ջրի հոսք չունեն, այնպես որ այս քանակների ջուր կարելի է ստանալ միմիայն Սեւանա լճից, որն էլ մշտապես «ինչու»-ների պատճառ է հանդիսացել: Ցավոք, այսքանով Սեւանա լճի վերաբերյալ հարցերը չեն սպառվում:

Սեւան-հրազդանյան 556 մգվտ հզորության հիդրոհամալիրը նախագծվել է այնպես, որ 6 կայաններից յուրաքանչյուրը կարող է աշխատել նաեւ իր հզորության 50 տոկոսի չափով, վայրկյանում ծախսելով 35 խորանարդ մետր ջուր, որն իրականացվում է հիմա: Ջրի այս քանակի դեպքում օրական էլեկտրաարտադրությունը մոտենում է 5 մլն կվտ ժամի: Թե ինչպես է բաշխվում եւ տնօրինվում այս քանակի արդյունքում գոյացող գումարը եւ ինչպես այն կարելի է ծառայեցնել հայ հողագործի շահերին, որը միշտ ունենալու է Սեւանի ջրի կարիքը, տնտեսագետների ու պետական այրերի լուծելու խնդիրն է: Ինչքան շուտ եւ բաց իրականացվի այս գործընթացը, նույնչափ կշահեն ՀՀ տնտեսությունն ու հայ հանրությունը:

ԲՐՅՈՒՍԵԼ

# Բաքվին վերջնականապե՞ս համոզեցին

**Նախքան Ադրբեջանի արդյունաբերության եւ էներգետիկայի նախարար Նաթիկ Ալիեւի հայտարարություններին անդրադառնալը նշենք, որ երկուշաբթի Բրյուսելում տեղի ունեցավ ԵՄ-ի եւ Արեւելյան գործընկերության անդամ երկրների ԱԳ նախարարների հանդիպում, որտեղ ներկա էր նաեւ ԵՄ-ի արտաքին հարաբերությունների գլխավոր հանձնակատար Քեթրին Էշթոնը: Երեքշաբթի Վաշինգտոնում տեղի ունեցավ ամերիկա-ադրբեջանական արդեն 13-րդ խորհրդակցությունը անվտանգության հարցերով, որին մասնակցում էին նաեւ ԱՄՆ էներգետիկայի նախարարի օգնականի տեղակալ Վիլյամ Բրայնը, ինչպես նաեւ Ադրբեջանում ԱՄՆ նորանշանակ դեսպան, էներգետիկ հարցերում մասնագիտացված Ռիչարդ Մորնինգսթարը: Այս համապատկերում էլ հենց հարեւան երկրի արդյունաբերության եւ էներգետիկայի նախարար Նաթիկ Ալիեւը հայտարարել է. «Ես կարծում եմ, որ Nabucco-West-ը կասպյան գազը Արեւմտյան Եվրոպա արտահանող լավագույն նախագիծն է եւ այլընտրանք է ռուսական նախագծի համար: Սա լավագույն նախագիծն է բոլոր առումներով: Nabucco-West-ը ԵՄ-ի նախագիծն է, որը մշտապես աջակցել է այս նախագծի իրագործմանը»:**

**Թե ԵՄ-ի նախարարների հետ հանդիպումն, այնուհետեւ ԱՄՆ-ի պաշտոնատար անձանց հետ «անվտանգության հարցերով» խորհրդակցությունը որքանո՞վ են անդրադարձել նախարար Ալիեւի հայտարարության վրա, միայն հնարավոր է ենթադրել, սակայն ադրբեջանցի նախարարը, փաստորեն հստակորեն ընդգծում է, որ Բաքուն գազը Եվրոպա արտահանելիս ամենեւին էլ չի պատրաստվում դա կատարել «ռուսական ճանապարհներով»: Ավելին, նախարար Ալիեւը հայտարարել է. «Nabucco-West-ը մեզ հնարավորություն է տալիս գազ արտահանել Արեւելյան եւ Կենտրոնական Եվրոպա: Սա ավելի հուսալի շուկա է ադրբեջանական գազի համար»: Այսինքն այն, ինչ առաջարկում էին ռուսները, անհրաժեշտ հնարավորությունները ադրբեջանական գազի արտահանման գործընթացում Բաքվին չէր տալիս: Տարբերակը, որ Ադրբեջանը կարող է գազ արտահանել և՛ արեւմտյան, և՛ ռուսական գազատարերի միջոցով, իրատեսական չէ, քանի որ Բաքուն այդքան գազ պարզապես չունի:**

**Ինչ վերաբերում է Nabucco-West նախագծին, ապա նշենք, որ դրա շրջանակներում նախատեսվում է կառուցել 1300 կմ-անոց գազատար, որը կսկսվի թուրք-բուլղարական սահմանից եւ կհասնի մինչեւ Կենտրոնական Եվրոպա: Գազատարը նախատեսված է բացառապես ադրբեջանական գազը արտահանելու համար, դրա հզորությունը կլինի 20 մլրդ խմ: Այս գազատարով ադրբեջանական կողմը գազ պետք է արտահանի իր «Շահ-Դենիզ-2» կայանից: Այս գործընթացը նախատեսվում է սկսել 2017-ից: Ի դեպ, ընդհանուր առմամբ նախատեսվում է 16 մլրդ խմ գազի արտահանում, որից 6 մլրդ խմ-ն Թուրքիայի կարիքների համար կլինի, եւ միայն 10 մլրդ խմ գազ Ադրբեջանը կարտահանի Եվրոպա: Հ. Ա.**

## ՕՐԱԿԱՐԳ

2012թ. օգոստոսի 1-ին` ժամը 14:30-ին, ՀՀ ֆինանսների նախարարությունում (Մելիք-Ադամյան 1) կայանալիք վիճակախաղերի, շահումով խաղերի խաղատների լիցենզավորման հանձնաժողովի նիստի

▼ «Նիկմիլ 777» ՍՊԸ (ՇԽ-236 լիցենզիա), <<Բիգ-Ռամզես>> ՍՊԸ (ՇԽ-208 լիցենզիա), «Կալա Սլոտ» ՍՊԸ (ՇԽ-168 լիցենզիա), «Բոնուս Մոնուս» ՍՊԸ (ՇԽ-249 լիցենզիա) «Լենդ-Գեյմ» (ՇԽ-230 լիցենզիա) ՍՊԸ նկատմամբ պատասխանատվության միջոցներ կիրառելու հարցերի քննարկում:

**ՀՀ ֆինանսների նախարարություն**


**«Էկոնոմիկա եւ Իրավունք» ամսագիր**

**Ինչպես անթերի վարել հաշվապահությունը եւ խուսափել հաշվապահական, հարկային եւ իրավաբանական սխալներից**

▼ **Օրենսդրական նորություններ - Պարզաբանումներ - Խորհրդատվություն**

▼ **«Էկոնոմիկա եւ Իրավունք» - ամսագիր ղեկավարների եւ մասնագետների համար**

*Բաժանորդագրվելու համար զանգահարեք 54-24-81, 54-74-81*





# Մի շարք միջազգային հարցերում Հայաստանի ու Ֆրանսիայի դիրքորոշումները համընկնում են

*1-ին էջից*

Նալբանդյանի խոսքով` Ֆրանսիան եւ Հայաստանը ունեն առանձնաշնորհյալ հարաբերություններ, որոնք խարսխված են ավանդական բարեկամության վրա: Դիվանագիտական հարաբերությունների քսանամյա պատմության ընթացքում, ըստ Նալբանդյանի, փոխհարաբերությունները վերընթաց զարգացում են ապրել, երկու երկրների ամենաբարձր մակարդակի մի քանի տասնյակ փոխայցելություններ են տեղի ունեցել, ներառյալ Հայաստանի եւ Ֆրանսիայի նախագահների փոխադարձ պետական այցելությունները:

«Երկու երկրների միջեւ այսօր առկա է բարձր մակարդակի քաղաքական երկխոսություն, ձեւավորված են լայն իրավապայմանագրային դաշտ, միջխորհրդարանական, ապակենտրոնացված ինտենսիվ կապեր, ֆրանսիական ընկերությունների ներդրումները Հայաստանի տնտեսությունում ծավալով երկրորդն են` գործում է ֆրանսիական կապիտալի մասնակցությամբ 160 ընկերություն բանկային, հեռահաղորդակցության, ագրոարդյունաբերության եւ այլ բնագավառներում: Ակտիվ համագործակցություն է ընթանում մշակութային եւ գիտակրթական ոլորտներում», ընդգծել է Հայաստանի արտաքին գերատեսչության ղեկավարը:

Հայաստանի եւ Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարները քննարկել են միջազգային եւ տարածաշրջանային երկուստեք հետաքրքրություն ներկայացնող խնդիրներ: Այս ենթատեքստում նախարարները գոհունակությամբ արձանագրել են, որ մի շարք միջազգային հարցերի վերաբերյալ Հայաստանի եւ Ֆրանսիայի դիրքորոշումները համընկնում են: Նախարարները քննարկել են Հայաստան-Եվրոպական միություն հարաբերությունները եւ այդ շրջանակներում իրականացվող ծրագրերը, անդրադարձել Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության շրջանակներում փոխգործակցությանը:

Էդվարդ Նալբանդյանը Լորան Ֆաբիուսին հրավիրել է այցելել Հայաստան:

Ա. Հ.

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ` 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող` «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը` 02 Ա N 047261, տրուած` 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ` 3000, ստորագրուած է տպագրութեան` 25.7.2012, գինը` 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում` Արշակունեաց 2: